

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՐԱԶՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ԲԵԼԼԱ ՍՈՒՐԵՆԻ ԽՈՋՈՒՄՅԱՆ

**ՌՈՒՍԵՐԵՆԻ ՍՈՄԱՏԻԿ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ
ԻՄԱՍՏԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԵՐԵՆԻ ԶՈՒԳԱԴՐՈՒԹՅԱՄԲ**

**Ժ. 02. 02. – «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն»
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների դոկտորի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության**

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների դոկտոր,
պարոֆեսոր Լ.Մ. Խաչատրյան

բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Ա.Յ. Խաչիկյան

բանասիրական գիտությունների դոկտոր,
դոցենտ Ա.Վ. Հակոբյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի Վ. Բրյուսովի անվան
լեզվահասարակագիտական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2018 թ. ապրիլի 16 -ին՝ ժամը 15-ին, ՀՀ
ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈՒՀ-ի՝ Լեզվաբանության
019 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0015, Երևան, Գրիգոր Լուսավորչի 15

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան
լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018 թ. մարտի 15-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝
բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ

Ն.Մ. ՍԻՄՈՆՅԱՆ

Թեմայի արդիականությունը և հարցի ուսումնասիրվածությունը

Թեմայի արդիականությունը պայմանավորված է հումանիտար գիտությունների՝ դեպի մարդն ակնհայտ ուղղվածությամբ, որի արգասիքն են ժամանակակից լեզվաբանության մեջ ձևավորված ու արդեն իսկ լայն տարածում ստացած նոր ուղղությունները. դրանց բոլորի կենտրոնում մարդն է՝ շրջակա միջավայրի հետ ունեցած իր բազմազան փոխհարաբերություններով: Դրա հետ կապված՝ անհրաժեշտ է նոր տեսանկյունից դիտարկել ու նկարագրել լեզվական ամենատարբեր երևույթներ, այդ թվում և դարձվածքները, որոնք սերտորեն առնչվում են մարդկային գործոնին և մարդկային փոխհարաբերություններին : Նշված բնագավառում դարձվածքների կարևորագույն մի շերտ, որը հիմնված է մարդու մարմնի համընդհանուր պատկերացումների փոխակերպման վրա, կազմում է հատուկ խումբ: Խոսքը սոմատիկ դարձվածքների մասին է, որոնց կազմում առկա է մարմնի/դեմքի մաս անվանող բաղադրիչ: Ինչ վերաբերում է զուգադրական ուսումնասիրություններին, ապա դրանց նկատմամբ ներկայիս հետաքրքրությունը պայմանավորված է տարբեր ոլորտներում միջազգային շփումների զգալի ընդլայնմամբ և լեզվամշակութային տարբեր հանրությունների ներկայացուցիչների հաղորդակցման ընթացքում առաջացող խնդիրների լուծման անհրաժեշտությամբ:

Ուսումնասիրության նյութը ուսերենի և հայերենի սոմատիկ դարձվածքներն են, որոնք լայն տարածում են ստացել լեզվում:

Ուսումնասիրության առարկան ուսերենի սոմատիկ դարձվածքների լեզվամշակութային և կառուցվածքաիմաստային առանձնահատկությունների զուգադրությունն է հայերենի հետ:

Ուսումնասիրության վարկածը հետևյալն է՝

- որպես թեմատիկ խումբ՝ սոմատիկ դարձվածքները գերիշխող դիրք են զբաղեցնում ուսերենի և հայերենի դարձվածային համակարգում.
- սոմատիկ դարձվածքների ճնշող մեծամասնությունը կապված է ոչ վերբալ լեզվի դրսևորումների՝ ժեստերի և դիմախաղի հետ.
- լինելով ամենավառ ունիվերսալ թեմատիկ խումբ և բնութագրվելով մարդակենտրոն ուղղվածությամբ՝ զուգադրվող լեզուների սոմատիկ դարձվածքները երկու լեզուներում էլ լեզվամշակութային մեծ արժեք են ներկայացնում և օգնում են ավելի խորը ներթափանցելու այս կամ այն լեզվամշակութային հանրության լեզվապատկեր, հասկանալու տվյալ ժողովրդի մտածելակերպը, ծանոթանալու նրա ազգամշակութային ավանդույթների և կարծրատիպերի հետ՝ այդ կերպ նպաստելով տարբեր մշակույթների ներկայացուցիչների միջմշակութային հաղորդակցության դյուրացմանը.
- ուսերենի և հայերենի սոմատիկ դարձվածքների զուգադրական վերլուծությունը թույլ է տալիս բացահայտելու դրանց միջև եղած նմանություններն ու

տարբերությունները, սահմանելու լեզվական ընդհանրությունների (языковые универсалии) և յուրահատկությունների (языковые уникалии) հարաբերակցությունը:

Ատենախոսության նպատակը և խնդիրները

Ատենախոսության նպատակն է կատարել ռուսերենի և հայերենի սոմատիկ դարձվածքների լեզվամշակութային ու իմաստակառուցվածքային ոլորտների զուգադրական համակողմանի վերլուծություն՝ հայտնաբերելու համար դրանց միջև եղած ընդհանրությունները և տարբերությունները, բացահայտելու նրանց ազգամշակութային առանձնահատկությունները, ներկայացնելու երկլեզվյան դարձվածաբանական բառարան կազմելու ընդհանուր սկզբունքները:

Նշված նպատակն իրագործելու համար առաջադրվել են հետևյալ **խնդիրները՝**

- մշակել վերլուծության տեսական հստակ հիմք.
- ընտրել խնդրո առարկա դարձվածքները.
- ուսումնասիրվող նյութը բաշխել ըստ առանձին սոմատիկ բների.
- կատարել սոմատիկ դարձվածքների մի շարք կարևոր դասակարգումներ՝ ըստ իմաստի ու կառուցվածքի.
- ցույց տալ սոմատիկ դարձվածքների հարացուցային իրացումները.
- բացահայտել միջլեզվական համարժեքներն ու համարժեք չունեցող սոմատիկ դարձվածքները.
- փաստարկել սոմատիկ դարձվածքների նշանային պիտակավորումը.
- բացահայտել սոմատիկ դարձվածքների խորհրդանշանային բնույթը և դրանց կապը ոչ վերբալ լեզվի հետ.
- բացահայտել զուգադրվող լեզուներում առկա համամարդկային ու ազգային յուրահատուկ խորհրդանիշները.
- ապացուցել, որ սոմատիկ դարձվածքներում արտացոլվում են տվյալ մշակույթի ներկայացուցիչների մտածելակերպի, ավանդույթների և կարծրատիպերի բնորոշ առանձնահատկությունները.
- վերլուծության և դասակարգման հիման վրա վեր հանել զուգադրվող լեզուների լեզվակիրների՝ աշխարհի լեզվական պատկերը ձևավորող ընդհանուր օրինաչափությունները.
- կատարել ռուսերեն և հայերեն սոմատիկ դարձվածքների ոճաբանական վերլուծություն.
- դիտարկել սոմատիկ դարձվածքների կիրառման առանձնահատկությունները խոսքում և գեղարվեստական գրականության լեզվում.
- շարադրել սոմատիկ դարձվածքների երկլեզու բառարան կազմելու հիմնական սկզբունքները և ներկայացնել նման բառարանի նմուշը:

Ատենախոսության մեջ կիրառվել են հետազոտության հետևյալ մեթոդները՝ հոծ ընտրության, նկարագրման, դասակարգման, բաղադրիչների վերլուծության, ստուգաբանական, զուգադրության և ոճաբանական վերլուծության:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքում ընկած են գիտական համա-կարգման ու զուգադրական վերլուծության սկզբունքները, ինչպես նաև ականավոր լեզվաբանների և մասնավորապես դարձվածաբանների հայտնի աշխատությունները:

Ատենախոսության գիտական նորույթը

Սոմատիկ դարձվածքները ռուս լեզվաբանության մեջ բազմիցս ենթարկվել են հա-մակողմանի ուսումնասիրության: Այդ թեման մշտապես գտնվել է մասնավորապես այնպիսի հայտնի լեզվաբանների ուշադրության կենտրոնում, ինչպիսիք են Վ. Ն. Տելիան, Ն. Ֆ. Ալեֆիրենկոն, Վ. Պ. Ժուկովը, Վ. Մ. Մոկիենկոն, Գ. Ե. Կրեյդլինը, Տ. Զ. Չերդանցևան, Տ. Ա. Սմիրնովան, Դ. Ս. Սկնարյովը, Ի. Ռուսեցկայան և ուրիշներ¹: Ռուս դարձվածաբանների բազմաթիվ ուսումնասիրություններում սոմատիկ դարձվածքները լուսաբանվում են տարբեր տեսանկյուններից, քիչ չեն նաև վերջիններիս զուգադրական ուսումնասիրությունները: Հայ լեզվաբանության մեջ, սակայն, սոմատիկ դարձվածքները չեն ենթարկվել առանձին քննության, առավել ևս՝ ռուսերենի զուգադրությամբ:²

Սույն աշխատանքի **գիտական նորույթն** այն է, որ առաջին անգամ ներկայաց-ված է ռուսերենի սոմատիկ դարձվածքների բազմաշերտ ուսումնասիրություն հայե-րենի զուգադրությամբ, ինչպես նաև առաջարկված են ռուս-հայերեն սոմատիկ դարձ-վածքների բառարան կազմելու ընդհանուր սկզբունքները: Բացի այդ՝ այս աշխատան-քում կատարվել են սոմատիկ դարձվածքների որոշ նոր դասակարգումներ, որոնք դեռևս չեն օգտագործվել նմանատիպ զուգադրական ուսումնասիրություններում: Ուսումնասիրության արդյունքում զուգադրվող լեզուների միջև հայտնաբերվել են

¹ Տես՝ Телия В.Н. Русская фразеология. Семантический, прагматический и лингвокультурологический аспекты // Языки русской культуры. М., 1996; Крейдлин Г.Е. Русские жесты и жестовые фразеологизмы: отражение наивной этики в невербальном и вербальном кодах // Логический анализ языка. Языки этики. М.: Языки русской культуры, 2000; Крейдлин Г.Е. Невербальная семиотика: Язык тела и естественный язык. М.: НЛО, 2002; Крейдлин Г.Е. Концептуализация частей тела в русском языке в невербальных семиотических кодах // Русский язык в научном освещении, №2, 2006; Снарев Д.С. Фразеологизмы русского языка с компонентами-соматизмами. АКД. Челябинск, 2006; Русецкая И. Концептуализация культурных стереотипов душа и тело в русской соматической фразеологии. М., 2012; Муравьева А.И. Лингвокультурологический аспект изучения соматической фразеологии неродственных языков // Вестник МГЛУ, 2013, №15 (675) и др.

² Տես՝ Եղիազարյան Գ.Ո. Մարմնի մասերի անվանումներով կազմված դարձվածքները հայերենում և անգլերենում: ԹԱՍ: Եր., 2005, Գրիգորյան Ա.Ռ. Դարձվածքների տեսակները. Աստվածաշնչյան որոշ սոմատիկ դարձվածքներ՝ անգլերեն և հայերեն թարգմանությամբ: Եր.// Աստղիկ, 2012-2013, Օլյան Ա. Բառապաշարի թեմատիկ դասակարգումն ու մարմնի մասերի իմաստային խումբը լեզվաբանական հետազոտության առարկա: Եր. // Հայագիտական հանդես, 2016, № 31:

դարձվածաբանական համարժեքներ, դարձվածաբանական նմանակներ և համարժեք չունեցող դարձվածքներ:

Ատենախոսության տեսական արժեքը պայմանավորված է նրանով, որ այն սոմատիկ դարձվածքների լեզվամշակութային, իմաստային և կառուցվածքային զուգադրական վերլուծության օրինակ է, որը թույլ է տալիս բացահայտելու երկու լեզուների զուգադրվող միավորների միջև եղած ընդհանրություններն ու առանձնահատկությունները և ավելի բարձր մակարդակի բարձրացնելու դարձվածաբանության ուսումնասիրությունը, զարգացնելու լեզվի մշակույթը, ընդլայնելու միջմշակութային հաղորդակցման կապերն ու ավելի խորը ներթափանցելու այս կամ այն լեզվամշակութային ընդհանրության աշխարհի լեզվապատկեր:

Ատենախոսության գործնական արժեքն այն է, որ սույն ուսումնասիրության արդյունքները հնարավոր է կիրառել հայալեզու ուսանողներին գործնական ռուսաց լեզու դասավանդելու պրակտիկայում, բանասիրության ֆակուլտետների բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների համար նախատեսված հատուկ դասընթացներում, թարգմանության տեսության մեջ և պրակտիկայում, դարձվածքների երկլեզու թեմատիկ բառարաններ կազմելիս:

Պաշտպանության են ,ներկայացվում հետևյալ դրույթները՝

- պատմական զարգացման ընթացքում սոմատիկ դարձվածքները ենթարկվել են տարաբնույթ փոփոխությունների ու փոխակերպումների.
- սոմատիկ դարձվածքներին բնորոշ են բազմիմաստություն, տարբերակային ձևեր, հոմանշություն և հականշություն.
- սոմատիկ դարձվածքները բաշխվում են առանձին լեզվաբների՝ ըստ սոմատիկ բաղադրիչի՝ անկախ դարձվածքում վերջինիս զբաղեցրած դիրքից.
- սոմատիկ բաղադրիչը ոչ միշտ է հանդիսանում դարձվածքի հիմք.
- զուգադրվող սոմատիկ դարձվածքների շրջանակներում կարելի է առանձնացնել լեզվական ընդհանրություններ (языковые универсалии) ու յուրահատկություններ (языковые уникалии);
- դարձվածքների գերակշռող մասի հիմքում ընկած է ոչ վերբալ նշանները.
- սոմատիկ դարձվածքները բնութագրվում են ոճային հագեցվածությամբ.
- սոմատիկ դարձվածքների առանձնահատկությունների, ոչ վերբալ լեզվի հետ նրանց ունեցած կապի ճիշտ ընկալումը թույլ է տալիս ներթափանցելու օտար լեզվային մշակույթներ և զգալիորեն հեշտացնում է միջմշակութային հաղորդակցման գործընթացը:

Ատենախոսության կառուցվածքը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, համապատասխան ենթագլուխներ պարունակող չորս գլուխներից, եզրակացություններից, օգտագործած գրականության ցանկից և հավելվածից:

Ներածության մեջ («Դարձվածաբանության տեսական հիմունքները») ներկայացվում է խնդրո առարկային առնչվող ուղղությունների, տեսակետների, աշխատությունների տեսական ամփոփումը:

Յուրաքանչյուր լեզվի արտահայտչամիջոցների շարքում առանձնակի տեղ է զբաղեցնում դարձվածային միավորների շերտը: Դարձվածքները հանդես են գալիս լեզվում որպես տարատեսակ մտքերի, հույզերի, հոգեվիճակների «փաթեթավորման» կարճառոտ միջոց: Հաղորդակցման մեջ դրանց լիարժեք գործելը հնարավոր է այն դեպքում, եթե հաղորդակիցները տիրապետում են լեզվամշակութային ծածկագրին, որը հնարավորություն է տալիս արագ ճանաչելու դարձվածքն ու բացելու ծածկագիրը:

Լեզվի դարձվածային կազմը չափազանց հարուստ է և բազմաշերտ: Դարձվածքները կարող են առաջանալ իրականության պատկերավոր ըմբռնման հիման վրա, որն արտացոլում է տվյալ հանրության կենցաղային կամ պատմամշակութային փորձ, որևէ տիպային իրավիճակ կամ պատմական իրադարձություն, որոնք դեռ ապրում են լեզվակիրների գիտակցության մեջ: Դարձվածային կազմի միավորները կարող են լինել բանահյուսության, կրոնական, առասպելային կամ գրական տեքստերի մնացորդներ՝ պարունակելով բարոյախոսությամբ արտահայտված սեղմ բովանդակություն:

Ժամանակակից լեզվաբանության մեջ նկատվում է լեզվային հարացույցի կտրուկ շրջադարձ՝ դեպի մարդակենտրոն (антропоцентрический) մոտեցում: Ներկայումս լեզվաբանական բազմաթիվ ուսումնասիրությունների հիմքում ընկած է լեզվի ու մշակույթի փոխկապակցման գաղափարը, ստեղծվել է լեզվաբանական ուղղություն, որի ուսումնասիրության առարկան դարձվածային միավորների ազգամշակութային առանձնահատկությունների արտացոլումն է լեզվում և խոսքում: Լեզվի ու մշակույթի միջև եղած սերտ կապի հայեցակարգի տեսական հիմունքները, որոնց հիմնադիրը համարվում է Վիլիելմ ֆոն Հումբոլդտը, հետագայում լայն զարգացում ստացան լեզվամշակութաբանության և միջմշակութային հաղորդակցության բնագավառների մի շարք կարևոր ուսումնասիրություններում (մասնավորապես՝ Վ. Ն. Տելիայի, Վ. Մ. Մոկիենկոյի, Ն. Ֆ. Ալեֆիրենկոյի, Դ. Օ. Դոբրովոլսկու, Վ. Ա. Մասլովայի, Ս. Գ. Տեր-Մինասովայի և այլոց աշխատություններում): Ս. Գ. Տեր-Մինասովան նշում է, որ «լեզուն մշակույթի հայելին է, որում արտացոլվում են ոչ միայն մարդուն շրջապատող իրական աշխարհը, նրա կյանքի իրական պայմանները, այլև ժողովրդի ինքնագիտակցությունը, մտածելակերպը, ազգային բնավորությունը, կենսակերպը, ավանդույթները, սովորույթները, բարոյախոսությունը, արժեհամակարգը, աշխարհընկալումը»:³

Նման ուսումնասիրությունների շարքում հատուկ տեղ են զբաղեցնում դարձվածաբանության ոլորտի աշխատությունները: Դարձվածաբանությունը լեզվի ամենարտահայտիչ շերտերից մեկն է և լավագույնս է արտացոլում ժողովրդի ոգին, աշխարհըն-

³Тер-Минасова С.Г. Язык и межкультурная коммуникация. М.: Слово, 2008: 14.

կալման ազգային առանձնահատկությունները, ժողովրդի մշակույթի ինքնատիպությունը:⁴

Դարձվածքների ՝ իբրև լեզվամշակութային նշանների, ուսումնասիրությունը թույլ է տալիս ոչ միայն ավելի խոր ներթափանցելու դրանց լեզվական յուրահատկությունների մեջ և արժևորելու նրանց կարևոր դերը հաղորդակցման գործընթացում, այլև վերծանելու նրանցում ծածկագրած մշակութային իմաստները, բացահայտելու նրանց կապն ազգամշակութային ավանդույթների ու կարծրատիպերի հետ:

Մարդակենտրոն մոտեցման տեսանկյունից, որն ուղղված է լեզվական ծածկագրերի առանձնահատկությունների բացահայտմանը, տեղեկատվության փոխանցմանն ու պահպանմանը, ուսումնասիրության համար հատկապես բարենպաստ նյութ է սոմատիկ դարձվածքների թեմատիկ խումբը (ՍԴ), որի բաղադրակազմում ներառված են մարդու մարմնի և դեմքի մասերի անվանումները: Սոմատիկ դարձվածքները հանդես են գալիս որպես «մարդամշակութային» կազմությունների խումբ՝ իրենց ամբողջական իմաստային ու արտահայտիչ պատկերավոր կառուցվածքով, որոնց ձևավորումն անմիջականորեն կապված է մարդու մտավոր վերլուծական գործունեության հետ՝ շրջակա միջավայրը ճանաչելու ընթացքում: Սոմատիկ դարձվածքների իմաստի, այդ թվում նաև նրանց մարմնի մասեր անվանող «պատկերավոր» բաղադրիչի մեկնաբանումը հնարավորություն է տալիս բացահայտելու իրական աշխարհի, նաև հենց մարդու ազգամշակութային ընդհանուր հասկացությունների յուրատիպությունը: Սոմատիկ դարձվածքներն իրական միջավայրի տարբեր օբյեկտների, երևույթների, վիճակների անվանման համապատասխան միջոց են, որոնք ցուցադրում են աշխարհընկալման մարդակերպային սկզբունքները:

Ներկայումս լեզվաբանության, մասնավորապես դարձվածաբանության շրջանակներում նկատվում է միտում՝ ուսումնասիրել դարձվածքներն ըստ թեմատիկ տարբեր խմբերի, իսկ նշված խմբերի դասակարգման համար տարբեր գիտնականներ կիրառում են տարբեր չափանիշներ՝ կախված ուսումնասիրության թեմայից: Օրինակ՝ որոշ գիտնականների կողմից առաջարկված դարձվածքների թեմատիկ դասակարգումն ընդգրկում է հետևյալ խմբերը.⁵

- բնական օբյեկտներ ցուցանշող (анютинны глазки - անյուտայի աչիկներ).
- ժամանակի նշում (в мгновение ока –մի ակնթարթում): Այս խմբի դարձվածքները չեն չափում ժամանակը, այլ ցույց են տալիս դրա ընթացքի արագության չափը.
- չափի և քանակի նշում (с ног до головы – ոտքից գլուխ; сыт по горло – մինչև կոկորդը կուշտ): Նման դարձվածքներն ունեն զուտ մարդաչափական ուղղվածություն.

⁴ Телия В.Н. Культурно-национальные коннотации фразеологизмов // Славянское языкознание. М.: Наука, 1993 : 13.

⁵ Телия В.Н. Русская фразеология. Семантический, прагматический и лингвокультурологический аспекты // Языки русской культуры. М., 1996; Добровольский Д.О. Типология идиом // Фразеография в Машинном фонде русского языка. М.: Наука, 1990 и др.

- տեղի նշում (под носом –քթի տակ; под рукой –ձեռքի տակ)։
- ֆիզիկական գործողություն (братъ за горло –կոկորդից բռնել)։
- կամային գործողություն (братъ в свои руки –իր ձեռքը վերցնել)։
- ինտելեկտուալ գործողություն/վիճակ (голова варит –գլուխն աշխատում է)։
- զգացմունքային ոլորտ (сердце не лежит –սիրտը չի կայնում)։
- անձի բնութագրում՝ ըստ ֆիզիկական տվյալների (косая сажень в плечах – թիկ-նեղ)։

- անձի բնութագրում ըստ սոցիալական դիրքի (белая кость –սպիտակ ոսկոր)։

Լեզվաբանության արդի ուղղություններից է նաև դարձվածքների զուգադրական ուսումնասիրությունը, որի նկատմանը վերջին ժամանակների հետաքրքրությունը կարելի է բացատրել տարբեր ասպարեզներում նկատվող միջազգային կապերի ընդլայնմամբ, ինչպես նաև լեզվամշակութային տարբեր ընդհանրություններին պատկանող մարդկանց փոխհաղորդակցման ընթացքում առաջացող խնդիրների լուծման անհրաժեշտությամբ։

Ատենախոսության առաջին գլխում («Սոմատիկ դարձվածքների պատմաժամանակագրային նկարագրությունը») կատարվում է սոմատիկ դարձվածքների պատմական դասակարգում՝ ըստ լեզվաբանության մեջ ընդունված ավանդական դասակարգման։ Առանձնացվում են սոմատիկ դարձվածքների երեք խմբեր՝ բուն ռուսական/հայկական ՍԴ, փոխառված ՍԴ, դարձվածքային պատճեններ (кальки)։ Երկու լեզուներում էլ առավել լայնածավալ խումբ են կազմում բուն դարձվածքները։ Բուն ռուսական դարձվածքների աղբյուր են լ ընդհանուր սլավոնական լեզուն, որոշ ազատ բառակապակցություններ և արդեն իսկ լեզվում առկա պատրաստի նմուշներ (водить за нос – водити за ніс; под горячую руку; сломя голову)։ Ազատ բառակապակցությունը կարող է վերածվել դարձվածքի, եթե այն փոխաբերական իմաստով հաճախ է օգտագործվում լեզվում և կտրված է իրականության այն հասկացողությունից, որն արտահայտված է ազատ բառակապակցության մեջ։ Ինչ վերաբերում է բուն ռուսական սոմատիկ դարձվածքներին, որոնք առաջացել են լեզվում առկա պատրաստի կաղապարների օրինակով, ապա, ինչպես ցույց է տալիս վերլուծվող նյութը տոկոսային հարաբերությամբ դրանք զգալիորեն զիջում են ազատ բառակապակցություններից առաջացած դարձվածքներին։ Բացի այդ՝ համապատասխան կաղապարներով կազմված դարձվածքները ձեռք են բերում հուզական արտահայտիչ երանգավորում և հաճախ դրոշմված են անհատականությամբ։ Այդ իսկ պատճառով նմանատիպ սոմատիկ դարձվածքներն ավելի հաճախ ընկալվում են որպես նորակազմություններ, քան որպես փոխակերպված տարբերակներ և հազվադեպ են ամրապնդվում ռուսերենի դարձվածքային համակարգում։ Բուն հայկական դարձվածքների հիմնական աղբյուրը հին հայերենն է։ Այդպիսի դարձվածքները լեզվում կարող են հանդես գալ երկու ձևով՝ *ձեռքերը կեղտոտել – կռները աղտոտել*։

Ռուսերենի փոխառված սոմատիկ դարձվածքները հիմնականում ունեն հին սլավոնական կամ արևմտաեվրոպական ծագում։ Դրանց մեծ մասը ամրապնդվել է ժամանակակից ռուսերենի դարձվածքային համակարգում ու լայն տարածում ստացել

լեզվում: Հին սլավոնականից փոխառված որոշ դարձվածքներ, պարունակելով հնաբանության (архаичные) բաղադրիչներ, դուրս են մղվել գործածությունից, սակայն ժամանակակից լեզվում առկա են դրանց համարժեք ձևերը, որոնք և կայուն տեղ են զբաղեցրել ակտիվ բառապաշարում (с молодых ногтей – с раннего возраста): Հին սլավոնականից փոխառված դարձվածքների մյուս մասը ռուսերենի դարձվածքային համակարգում ամրակալված է առանց որևէ հնացած բաղադրիչի և ժամանակակից լեզվակիրների համար թե՛ կառուցվածքային, թե՛ քերականական արտահայտման տեսակետից առանձնանում է առավել մատչելիությամբ: Հին սլավոնական լեզուն դարձվածային փոխառությունների միակ աղբյուրը չէ: Ժամանակակից ռուսերենի դարձվածային համակարգում բազմաթիվ են նաև փոխառություններ արևմտաեվրոպական լեզուներից, որոնք քանակական առումով զգալիորեն զիջում են հին սլավոնականից փոխառված դարձվածքներին: Ինչ վերաբերում է հայերենի փոխառված դարձվածքներին, ապա դրանց հիմնական աղբյուրներն են արևելյան և սլավոնական լեզուները: Հայերենի փոխառված դարձվածքների գերակշռող մասը պատմական զարգացման արգասիք է: Ժամանակի ընթացքում դրանք ամրապնդվել են հայերենի դարձվածային համակարգում և ստացել համընդհանուր գործածություն: Ավելի ուշ ժամանակաշրջանի փոխառությունները կատարվել են սլավոնական լեզուներից, մասնավորապես՝ ռուսերենից (օրինակ՝ *կոկորդին դեմ առնել, գլուխ խոնարհել, մարտերի արանքով նայել* և այլն):

Ի տարբերություն ռուսերենի՝ հայերենում պատճենները (кальки) չնչին տոկոս են կազմում, իսկ զուգադրվող լեզուներում ամրապնդված պատճեններն ունեն իրենց համարժեքները սեփական լեզուներում, և դրանց միջև ընտրությունը կախված է տվյալ պատճեի տարածվածությունից և, իհարկե, լեզվակիրների նախընտրությունից:

Հայտնի է, որ յուրաքանչյուր լեզվի դարձվածքներ ենթարկվում են տվյալ լեզվում ընդունված որոշակի քերականական, շարահյուսական, իմաստաբանական նորմերի, ապա և հասկանալի է, որ պատճենման արդյունքում ընդօրինակող լեզվում առաջանում են այդ նորմերին չհամապատասխանող օտար դարձվածքներ: Մյուս կողմից՝ հաճախ պատճենման շնորհիվ լեզուն համալրվում է դարձվածային նոր կաղապարներով, և այդ առումով պատճենման գործընթացը կարելի է դիտարկել որպես լեզվի զարգացման գործընթաց:

Ինչպես և ցանկացած լեզվական միավոր, դարձվածքները նույնպես զարգացում են ապրում, որի ընթացքում լեզվի դարձվածային համակարգն արտաքին աղբյուրներից անընդհատ համալրվում է նոր դարձվածքներով, մյուս կողմից՝ լեզվից աստիճանաբար դուրս են մղվում հնացածները, որոնց փոխարինելու են գալիս ժամանակակից համարժեք միավորներ: Աստիճանական զարգացման հետևանքով դարձվածքները ենթարկվում են տարատեսակ փոփոխությունների, որոնք անմիջականորեն ազդում են թե՛ դրանց կառուցվածքի, թե՛ իմաստի ամբողջականության վրա: Նման կարգի փոփոխություններից առավել տարածվածությամբ ակնառու են բառերի հակադարձ շրջադասությունը (инверсия), դարձվածքի կրճատումը (эллипсис), բառային ներթափանցումները (лексические вкрапления), դարձվածքի իմաստի ընդլայնումը (расширение значения) կամ սեղմումը (сужение значения),

վերացարկումը (абстрагирование), դարձվածքի իմաստային տեղաշարժումն ու առանձնացումը (смещение и обособление значения), բաղադրիչների փոխարինումը և այլն:

Դարձվածքի կազմի ընդլայնումը ենթադրում է դարձվածքի հետ հարաբերակցվող նշյալների /դենոտատների/ քանակի ավելացում, այսինքն՝ դարձվածքային միավորն ընդգրկում է նախկինից առավել լայն հասկացությունների շրջանակ: Նման փոփոխության հետևանքով կարող է ընդլայնվել դարձվածքի հետ կապակցվող բառերի շրջանակը կամ դարձվածքը կարող է ձեռք բերել նոր իմաստ: Դրան հակառակ գործընթաց է դարձվածքի իմաստի սեղմումը, որի ժամանակ նկատվում է դենոտատիվ հարաբերակցությունների քանակի կրճատում: Իմաստային վերացարկման դեպքում դարձվածքի բաղադրիչները կորցնում են իմաստային կապը շրջակա իրականության հետ: Դարձվածքի իմաստի տեղաշարժման հետևանքով փոխվում է վերջինիս՝ նախկինում ունեցած իմաստը, իսկ իմաստի առանձնացումն առաջացնում է իմաստային նոր երանգավորում: Դարձվածքի բաղադրիչների փոխարինումը խախտում է նրա կազմը: Այս փոփոխությունը հիմնականում վերաբերում է հնացած բառերին, որոնք դուրս են մղվել գործածությունից:

Հարկ է նշել, որ թվարկված երևույթները դարձվածքի իմաստային փոփոխություն չեն առաջացնում: Նշված փոփոխությունները բնորոշ են զուգադրվող լեզուներին, սակայն, քանի որ պատմաժամանակագրական գործընթացները տարբեր լեզուներում ընթանում են տարբեր ուղիներով, ապա և հանգեցնում են տարբեր արդյունքների: Այս պարագայում դրսևորվում են մշակութային, ազգային, աշխարհընկալման գործոնները, որոնք յուրովի են արտացոլում յուրաքանչյուր լեզվի բնորոշ առանձնահատկությունները:

Երկրորդ գլուխը («Սոմատիկ դարձվածքների ազգամշակութային յուրահատկությունը») կազմված է չորս ենթագլուխներից, որոնցից յուրաքանչյուրի մեջ սոմատիկ դարձվածքները ենթարկվում են համապատասխան զուգադրական վերլուծության:

Այս գլխում առաջին հերթին բացահայտվում է ազգային աշխարհայացքի, աշխարհընկալման կապը սոմատիկ դարձվածքների հետ, ցույց է տրվում դրանց իրական արտացոլումը դարձվածքների թեմատիկ խմբերում: Լեզվի դարձվածքային համակարգի պատմությունը ոչ միայն վերջինիս կազմավորումն է, այլև ժողովրդի աշխարհայացքի և աշխարհընկալման պատմությունը: Դարձվածքային համակարգը լեզվի արժեքավոր ժառանգություն է, որում արտացոլված են ժողովրդի պատմամշակութային աշխարհընկալումը, նրա սովորույթները, ավանդույթները, հավատքը: Դարձվածքներն ունակ են ոչ միայն նկարագրելու շրջակա աշխարհը, այլև մեկնաբանելու, գնահատելու այն՝ այդպիսով արտահայտելով աշխարհի հանդեպ եղած սուբյեկտիվ վերաբերմունք: Դարձվածքների հիմքում ընկած պատկերները հիմնականում ծանոթ են տվյալ լեզվամշակութային հանրությանը զուտ այն պատճառով, որ արտացոլում են այդ իսկ լեզվամշակութային բնորոշ աշխարհընկալումը, որը և թույլ է տալիս խոսելու դարձվածքների ազգամշակութային ինքնատիպության մասին:

Ներկայումս զգալիորեն աճել է դարձվածքների լեզվամշակութային ոլորտի ուսումնասիրությունների թիվը, քանի որ լեզվի դարձվածքային ֆոնդը յուրաքանչյուր առանձին մշակույթի ավանդույթների, չափանիշների, կարծրատիպերի ու խորհրդանիշների հիմնական պահուստն է: Դարձվածքների լեզվամշակութային ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս բացահայտելու աշխարհի պատկերի ընդհանուր ըմբռնումն ու դրա ազգամշակութային ինքնատիպությունը, իսկ քանի որ աշխարհի պատկերում շրջապատող իրականության հասկացությունների արժեքների գլխավոր չափանիշը մարդն է, ապա այն կարելի է դիտարկել որպես աշխարհի մարդակենտրոն մոդել, որտեղ մարդն իրեն զգում է իրականության մի մասը և շրջակա աշխարհն ընկալում է իբրև իր գոյության արտացոլում: Յուրաքանչյուր ժողովրդի բնորոշ է շրջակա միջավայրի՝ իր ընկալումն ու մեկնաբանումը, որը, արտացոլվելով լեզվում, ստեղծում է աշխարհի ազգային լեզվապատկերը: Վերջինիս ձևավորման մեջ կարևոր դեր են խաղում դարձվածքները, որոնք արտացոլում են էթնիկ աշխարհընկալման առանձնահատկությունները, ազգային մշակույթի յուրատիպությունը, արտահայտում են մարդու վերաբերմունքը շրջակա իրականության նկատմամբ և այլն: Դարձվածքներում արտահայտվում է ժողովրդի պատմական փորձը: Բացի այդ՝ դարձվածքները ոչ միայն արտացոլում են տվյալ մշակույթի առանձնահատկությունները, այլև ձևավորում են մարդու աշխարհայացքը, վարքի որոշակի կարծրատիպեր: Շատ դարձվածաբանների կարծիքով լեզվի ազգային յուրահատկությունը լավագույնս անմիջականորեն դրսևորվում է հենց դարձվածային համակարգում: Վ. Ա. Մասլովայի կարծիքով՝ «արտացոլվելով ժողովրդի մշակութային զարգացման երկարատև գործընթացը՝ դարձվածքները ամրակալում և սերնդեսերունդ փոխանցում են մշակութային ցուցումները, կարծրատիպերը և չափանիշները»:⁶ Իրենց աշխատություններում լեզվի և մասնավորապես նրա դարձվածաբանության կուսակող գործառույթին են անդրադառնում նաև այլ գիտնականներ:⁷

Լեզվում հաստատվում և դարձվածքների են վերածվում տվյալ ազգի մտածելակերպին առավել բնորոշ պատկերավոր արտահայտությունները, որոնք կապված են և հարաբերակցվում են ծանոթ ազգամշակութային պատկերների ու կարծրատիպերի հետ: Սակայն ոչ բոլոր դարձվածքներին է բնորոշ մշակութային խորհրդանշանայնությունը: Այն դարձվածքները, որոնց պատկերավոր հիմքերը կարծես «հուշում են» նրանց մշակութային մեկնաբանումը, երկակի հարաբերակցության մեջ են մշակույթի հետ: Այդպիսի դարձվածքների արտաքին ձևի բառացի ընթերցումը պատկերը հարաբերակցում է տվյալ լեզվամշակութային հանրության մեջ ընդունված, նրա աշխարհայացքին բնորոշ կարծրատիպերի, խորհրդանիշների հետ: Այս դեպքում նման դարձվածքների արագ բացահայտմանը նպաստում է տվյալ լեզվակիրներին

⁶Маслова В.А. Культурно-национальная специфика русской фразеологии // Культурные слои во фразеологизмах и дискурсивных практиках. М.: Языки славянской культуры, 2004: 82.

⁷ Вужбицкая А. Сопоставление культур через посредство лексики и прагматики // Языки славянской культуры. М., 2001: 38.

քաջաճանոթ որոշակի հատկանիշների, իրավիճակների, նրբությունների օգտագործումը, որը բնորոշ է նրանց մտածելակերպին: Մյուս կողմից՝ այդ պատկերը գիտակցվում և ծածկագերծվում է տվյալ լեզվակիրների մշակութային իրազեկությանը համապատասխան (օրինակ՝ «հարազատ արյուն», որտեղ «արյունը» հարազատության խորհրդանիշ է): Նման երկակի հարաբերակցության պատճառով էլ լեզվում գոյատևում և վերարտադրվում են դարձվածքները, որոնք սերնդեսերունդ փոխանցում են ժողովրդական ավանդույթները, ժողովրդի ոգին և ազգամշակութային ժառանգությունը:

Ատենախոսության այս հատվածում հանգամանորեն բնութագրվում են սոմատիկ դարձվածքները, որոնք առանձնանում են համընդհանրությամբ և կազմում են լեզվի դարձվածային ֆոնդի 1/3 մասը:⁸ Նշված թեմատիկ խմբի լայնածավալությունն առաջին հերթին բացատրվում է նրանով, որ մարմնի մասեր անվանող բառերը պատկանում են լեզվի հնագույն շերտին, նաև այն փաստով, որ սեփական անձի ընկալումը մարդն սկսել է այն զգացողություններից, որոնք փոխանցվել են անմիջապես զգայական օրգանների և սեփական մարմնի մասերի միջոցով:⁹ Սոմատիկ դարձվածքներին բնորոշ են կայունություն, գործածության մեծ հաճախականություն և ճյուղավորված իմաստային կառուցվածք: Պայմանականորեն մարդու մարմնի մասերի անվանումն ընդունված է բաժանել երկու խմբի՝ արտաքին մասերի անվանումներ և ներքին օրգանների անվանումներ: Գիտնականների մի մասը սոմատիկ բառապաշարին դասում է բոլոր այն բառերը, որոնք որևէ կերպ առնչվում են մարդու օրգանիզմի հետ, մյուսները՝ նշված խմբում ընդգրկում են միայն մարմնի մասերի անվանումները: Լեզվակիրների պատմամշակութային զարգացման ընթացքում լեզվի դարձվածային ֆոնդում ամրակալվում է աշխարհի ճանաչողության փորձը, իսկ կուտակող և հեռարձակող գործառույթների շնորհիվ լեզուն մեծ դեր է խաղում անձի ազգային բնավորության ու էթնիկական ընդհանրության ձևավորման գործում: Դարձվածքների հիմքում ընկած պատկերների և հասկացությունների խորհրդանշանական տիպականությունը, որոնցում արտացոլված է ժողովրդի աշխարհընկալումը, վկայում է տվյալ լեզվամշակութային ընդհանրության միասնական փորձի մասին: Օրինակ՝ տարածքային կողմնորոշման իմաստ արտահայտող դարձվածքները (*под носом – քթի տակ; под рукою – ձեռքի տակ; бок о бок – կողք կողքի*) արտահայտում են շատ մոտիկ, հեշտ հասանելի տարածության ավանդական չափանիշներ, մինչդեռ դրանց սոմատիկ բաղադրիչները ինքնին տարածության իմաստ արտահայտող միջոցներ չեն, այլ ձեռք են բերում այդ չափանշային իմաստը միայն տարածքային իմաստ ունեցող կապերի ուղեկցությամբ: Դարձվածքների պատկերավոր հիմքի նման խորհրդանշանայնությունը պայմանավորված է նրանց լեզվամշակութային

⁸ Фразеологический словарь русского языка (под ред. А.И. Молоткова). М.: Советская энциклопедия, 1967; Городецкая И.Е. Соматический компонент фразеологизмов // Вестник СГУ, 2007 : 162-166.

⁹ Чайко Т.Н. Названия частей тела как источник метафоры в апеллятивной и ономастической лексике // Вопросы ономастики, № 8-9. Свердловск, 1974: 104.

ընդհանրականությամբ: Սակայն ոչ բոլոր դարձվածքներն են ստանում մշակութային նշանների դեր: Այն դարձվածքները, որոնց պատկերավոր հիմքերը «հուշում են» դրանց մշակութային մեկնաբանությունը, երկակի հարաբերակցվում են մշակույթի հետ. ա/ նման դարձվածքների բառացի ընթերցման դեպքում պատկերը հասկացությանը հարաբերակցվում է տվյալ լեզվամշակութային ընդհանրության կողմից ընդունված կարծրատիպերի, խորհրդանիշների հետ, և այդպիսի դարձվածքների արագ ճանաչման համար սովորաբար օգտագործվում են որոշակի հատկանիշներ, իրավիճակներ, որոնք քաջածանոթ են տվյալ լեզվակիրներին և ընկած են նրանց աշխարհընկալման հիմքում, բ/ մյուս կողմից՝ այդ պատկերը՝ համապատասխան վերջիններիս մշակութային տեղեկացվածությանը, գիտակցվում և վերծանվում է լեզվակիրների կողմից: Նման երկակի հարաբերակցությունն էլ այն դարձվածքների գոյության և վերարտադրության պատճառն է, որոնք սերնդեսերունդ փոխանցում են ժողովրդական ավանդույթները, ոգին և մշակութային ժառանգությունը:

Խորհրդանշանների հետ կապը հատկապես ցայտուն է արտահայտված դիմային սոմատիզմներում, քանի որ վերջիններս անմիջականորեն կապված են տարատեսակ դիմախաղային շարժումների հետ: Օրինակ՝ «աչք» սոմատիկ գոյականը, որի միջոցով արտահայտվում են մարդկային բազմազան զգացմունքներ, ինչպես ռուսերենի, այնպես էլ հայերենի շատ դարձվածքներում հանդես է գալիս որպես գլխավոր բաղադրիչ (*вытаращивать глаза – աչքերը չռել* – զարմանքի նշան; *глаза разбегаются – աչքերը շեշտվեց լինել* – շփոթվածության նշան; *верный глаз – սուր աչք* – ճշգրտության նշան և այլն):

Չուզադրական ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս բացահայտելու ռուսերենի և հայերենի սոմատիկ դարձվածքների ընդհանրությունն ու ինքնատիպությունը: Ատենախոսության մեջ ուսումնասիրվող դարձվածքների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանց գերակշռող մասին բնորոշ է ընդհանրություն (универсальность), որը կարելի է բացատրել հետևյալ մոտեցումներով՝

- շրջակա իրականության մասին ունեցած տիպական պատկերացման արդյունքում կարող է համընկնել աշխարհի մշակութային իմաստավորումը (*под рукой – ձեռքի փակ; перед глазами – աչքի առաջ*).

- սոմատիկ բաղադրիչը կարող է արտահայտել մարդկային բարոյագիտական հատկանիշներ, արտաքին տվյալների, վարքագծի, սոցիալական պատկանելիության և այլ համամարդկային նորմեր (*кожа да кости – կաշին ու ոսկորները; золотые руки – ոսկի ձեռքեր* և այլն).

- զուգադրվող լեզուներում կարող են համընկնել պատկերավոր միջոցները, օրինակ՝ փոխաբերություն (*махнуть рукой – ձեռք քաշել; навострить уши – ականջները սրել*).

- բնորոշ է նաև աստվածաշնչյան և դիցաբանական ծագում ունեցող սոմատիկ դարձվածքներին (*ахиллесова пята – արիլլեսյան գարշապար; пригреть змею на зыду – կրծքին օձ փաքացնել*):

Սոմատիկ դարձվածքների ընդհանրությունը, համընկնումը զուգադրվող լեզուներում կարելի է բացատրել մարմնի մասերի անվանումների վերափոխանակման ավանդականությամբ, մշակութային խորհրդանշանային ծածկագրի համապատասխանությամբ: Համընդհանուր խորհրդանշանային վերափոխանակման առաջին հերթին ենթարկվում են այն սոմատիկ գոյականները, որոնք անվանում են առավել հստակ գործառույթներով բնութագրվող մարմնի մասերը, ինչպես նաև այն դարձվածքները, որոնց պատկերավորությունը հիմնված է շրջակա իրականությանն ուղղված դիմախաղային և ժեստային արձագանքների նկարագրման վրա:

Սոմատիկ դարձվածքների ինքնատիպությունը պայմանավորված է ևս մի շարք գործոններով.

- սոմատիկ տարբեր բաղադրիչների կիրառմամբ (*зуба не дура - բերանի համը լավ գիտի*).

- միևնույն սոմատիկ բաղադրիչի տարբեր խորհրդանշանային վերափոխանակմամբ (օրինակ՝ ի տարբերություն հայերենի՝ ռուսերենում «живот» սոմատիկ բաղադրիչը, բացի ուղղակի իմաստից, դարձվածքներում գործածվում է նաև այլ իմաստով՝ живот: *не на живот, а на смерть; решиться живота; класть живот*).

- զուգադրվող լեզուներից յուրաքանչյուրում այս կամ այն սոմատիկ բաղադրիչի ազգամշակութային արդյունավետությամբ (օրինակ՝ ռուսերենում առավել արդյունավետությամբ առանձնանում են «голова», «глаз», «ухо» սոմատիկ բաղադրիչները, հայերենում նշված բաղադրիչների շարքին կարելի է հավելել *ձեռք, լեզու, բերան* սոմատիկ գոյականները, որոնք ևս աչքի են ընկնում բարձր արդյունավետությամբ).

- բնորոշ ծիսակարգերի պատկերացմամբ (*заговаривать зубы* - հնից եկող բուժման ծես).

- անծեքների և բարեմաղթանքների ձևերով (ռուս. *типун тебе на язык*; հայ. *լեզուդ պապանձվի*).

- միայն տվյալ ազգին բնորոշ պատկերներով (*семи няदैй во лбу* - խելացի).

- ժողովրդական յուրօրինակ սովորույթներով և սնահավատությամբ (*лизать пятку* - ծագում է հին ռուսական ավանդույթից, ըստ որի՝ ընդունված էր լվանալ մեծապատիվ հյուրի ոտքերը).

- պատճենումներ այլ լեզուներից (*рука руку моет* - *ձեռքը ձեռք է լվանում* - լատինե-րենից):

Ուսումնասիրության ընթացքում հաջողվեց զուգադրվող լեզուների սոմատիկ դարձվածքների միջև հայտնաբերել նաև դարձվածային համարժեքներ, դարձվածային նմանակներ և համարժեք չունեցող դարձվածքներ:

Դարձվածային համարժեքները հիմնականում բնորոշ են՝

- այն դարձվածքներին, որոնց բաղադրակազմում առկա են առավել հաճախականությամբ ակնառու սոմատիկ բաղադրիչներ.

- այն դարձվածքներին, որոնց բաղադրակազմում ընդգրկված են միևնույն սոմատիկ գոյականները, այդ պատճառով էլ նրանցում արտահայտված պատկերները թե՛ ռուս, թե՛ հայ լեզվաընդհանրության կողմից ընկալվում են միևնույն կերպ (*потерять луцо* - *դեմքը կորցնել*).

● ,միջազգային, աստվածաշնչյան, առասպելական, օտարամուտ դարձվածքների (*зуб за зуб - արամն ընդ արամ, ахиллесова пята - արիխայան գարշապար*):

Դարձվածային նմանակներում պահպանվում է դարձվածքի ընդհանուր իմաստը, սակայն գործածվում է արտահայտման այլ պատկեր (*пальчики оближешь - համից չես կշտանա*):

Համարժեք չունեցող դարձվածքներում հիմնականում գործածվում են հնացած բառեր կամ զուտ տեղային հասկացություններ: Նման դարձվածքների իմաստը սովորաբար արտահայտվում է նկարագրության միջոցով (*с зулькин нос - մալինոցի չափ*) կամ բառային հոմանիշով (*косая сажень в плечах - թիկնեղ*)

Նշելի է, որ ինչպես մշակույթը, այնպես էլ նրա հիման վրա ձևավորված աշխարհընկալումն ունակ են արտացոլելու և վերարտադրելու տարբեր ժամանակաշրջանների մշակութային ավանդույթներ: Մշակութային կողմնորոշիչների պատմական փոփոխության դեպքում (սովորաբար դա կապված է դարաշրջանների պատմական հաջորդափոխության հետ) փոխվում է նաև համապատասխան դարձվածքների հիմքում ընկած պատկերների և խորհրդանիշների ազգամշակութային մեկնաբանումը:

Այս գլխում նաև հանգամանորեն ուսումնասիրվում է վերբայ և ոչ վերբայ լեզուների միջև եղած կապը, որը ցայտուն կերպով արտացոլված է սոմատիկ դարձվածքներում: Այստեղ նաև ներկայացնում ենք սոմատիզմների դասակարգումն՝ ըստ խմբեր: Ա. Մ. Կոչևատկինի, որն ընդգրկում է հետևյալ խմբերը՝

- սոմոնիմիկ սոմատիզմներ, որոնք կոչված են անվանելու մարմնի մասերը.
- օստոնիմիկ սոմատիզմներ՝ մարդկային մարմնի ոսկրային համակարգի անվանումներ.
- սպլանխոնիմիկ սոմատիզմներ՝ ներքին օրգանների անվանումներ.
- անզիոնիմիկ սոմատիզմներ՝ արյունատար համակարգի անվանումներ.
- սենսիոնիմիկ սոմատիզմներ՝ զգայողական օրգանների անվանումներ.
- տարատեսակ հիվանդություններ անվանող սոմատիզմներ:¹⁰

Բոլոր լեզուներում սոմատիկ բաղադրիչներ պարունակող դարձվածքների մեծ մասը կապված է մարդու զգայական և հոգեկան ոլորտների հետ: Զգացողությունները յուրօրինակ կերպով արտացոլում են մարդու փոխհարաբերությունները շրջակա միջավայրի հետ, ընդ որում՝ մարդկային հույզերն ուղեկցվում են արտահայտիչ տարբեր շարժումներով՝ դիմախաղով (*мимика*), ժեստերով, որոնք հաճախ համընկնում են լեզվամշակութային տարբեր ընդհանրությունների պատկանող մարդկանց մոտ՝ ի տարբերություն ծեսերի և ավանդույթների, որոնք բնորոշ են միայն տվյալ լեզվամշակույթին:

Զգացական երանգավորման տեսակետից գոյություն ունեն ժեստերի տարբեր դասակարգումներ: Օրինակ բարձր երանգավորումը բնութագրվում է հանդիսավորությամբ և բնորոշ է հիմնականում հռետորական և ծիսական ժեստերին (երդման արարողության ժամանակ ձեռքն Աստվածաշնչին դնելը), չեզոք կենցաղային

¹⁰ Кочеваткин А.М. Соматическая лексика эрзянского языка. Саранск: Красный октябрь, 2001: 200

Ժեստերը հաճախ գործածվում են կապ հաստատելու համար (ողջույնի և հրաժեշտի ժեստեր): Հայտնի են նաև դրական (հավանության, աջակցության, օգնության) և բացասական (դժգոհության, զայրույթի) ժեստեր: Իհարկե, զգացական ժեստերի դասակարգումը չի սահմանափակվում նշված ժեստերով, այն կարելի է լրացնել բազմաթիվ այլ ժեստերով:

Պայմանականորեն կարելի է նաև առանձնացնել հաղորդակցական (коммуникативные) և հատկանշանային (симптоматические) ժեստերի խմբեր: Առաջին խմբին պատկանող ժեստերը կրում են խոսակցին միտամնավոր ձևով հաղորդվող տեղեկատվություն: Այդպիսի ժեստերն իրենց բնույթով «երկխոսական են» /օրինակ՝ բռունցքով սպառնալը, մատով կանչելը, լեզու ցույց տալը, աչքով անելը և այլն/: Հատկանշանային ժեստերը հասցեատեր չունեն, նրանք միայն կոչված են արտահայտելու խոսողի հոգեվիճակը / զարմանքից բերանը բացելը, ամոթից այտերի կարմրելը և այլն/:

Այսպիսով, դիմախաղի և ժեստերի ոչ վերբալ լեզուն կարելի է դիտարկել որպես մարդու ներաշխարհի, հոգեվիճակի արտաքին արտացոլում: Որոշ ոչ վերբալ ազդանշաններ կարող են ունենալ բնածին բնույթ կամ կյանքի ընթացքում ձեռք բերած, ժառանգած, յուրացրած: Հայտնի է, որ տարբեր մշակույթներում հույզերի արտահայտման համար հաճախ օգտագործվում են դիմային միևնույն ազդանշանները՝ երջանկույթ-ունն արտահայտվում է ժպիտով, համաձայնությունը՝ գլխի շարժումով, զարմանքը՝ հոնքերի բարձրացումով և այլն: Նման դիմախաղն ու ժեստերը կրում են համամարդկային բնույթ: Սակայն երբեմն մշակույթները տարբերվում են միմյանցից ոչ վերբալ լեզվի արտահայտման ձևերով: Օրինակ՝ Տիբեթում լեզուն դուրս հանելը համարվում է ողջույնի ձև, որը բացարձակապես անհասկանալի է, ավելին՝ վիրավորական է ռուսական և հայկական մշակույթների ներկայացուցիչների համար:

Մեր ուսումնասիրության արդյունքում հանգում ենք այն տեսակետին, որ հետազայում դիմախաղը և ժեստերը տեղ են գտնում լեզվում, մասնավորապես՝ դարձվածքների մեջ և հատկապես՝ սոմատիկ դարձվածքներում, քանի որ հենց վերջիններիս սոմատիկ բաղադրիչներով են արտահայտվում բոլոր ժեստերը:

Նշելի է, որ զուգադրական ուսումնասիրության համար խիստ կարևոր է բացահայտել մարդու մարմնի մասերի թե՛ արտաքին և թե՛ ներքին բնութագրերը: Մեր ուսումնասիրության շրջանակներում ընդգրկված են սոմատիկ 29 անվանումներ, որոնց ընտրության չափանիշ է հանդիսացել լեզվում դրանց գործածության հաճախականությունը: Այս գլխում կատարել ենք նշված սոմատիկմների դասակարգում՝ ըստ հետևյալ հատկանիշների՝

- կենտ/զույգ.
- դիմային/մարմնային.
- դիմախաղային/ժեստային.
- ակտիվ/պասիվ:
- ազատ գործող/կայունացած.
- ռացիոնալ/զգացական:

Ուսումնասիրության մեջ ընդգրկված բոլոր 29 սոմատիզմները մանրամասն բնութագրվում են նշված դասակարգման բոլոր կետերով:

Կենտ/զույգ և դիմային/մարմնային բնութագրումները վերաբերում են արտաքին հատկանիշներին, որոնց բացահայտումը որևէ դժվարություն չի ներկայացնում: Դիմախաղային/ժեստային մարմնի մասերի պայմանական դասակարգումը հիմնված է երկու խմբերի օրգանների դասակարգման վրա՝ նրանց, որ մասնակցում են դիմախաղային գործընթացին և նրանց, որոնք ավելի ակտիվ ներգրավված են ժեստային գործողություններում, նույն այս սկզբունքով են դասակարգվում նաև ռացիոնալ/զգացական խմբում ընդգրկված սոմատիզմները: Ակտիվ/պասիվ բնութագրումն անմիջականորեն կապված է գործողության կատարման հնարավորության կամ անհնարինության/սահմանափակման հետ: Ներկայացրած դասակարգման գրեթե բոլոր խմբերի համապատասխան զույգերի միջև նկատվում է որոշակի փոխկապակցվածություն: Նման կապն ակնհայտ է հետևյալ խմբերի միջև՝ ակտիվ/պասիվ և ազատ գործող/կայունացած, դիմային/մարմնային և դիմախաղային/ժեստային: Վերջին զույգին կարելի է միացնել նաև ռացիոնալ/զգացական խումբը: Ինչ վերաբերում է կենտ/զույգ խմբին, ապա դա արտաքին բնութագիր է, որը մարմնի յուրաքանչյուր դիտարկվող մասի համար կրում է անհատական բնույթ, որը և պարզորոշ արտահայտվում է համապատասխան դարձվածքներում:

Այստեղ կատարվում է նաև սոմատիկ դարձվածքների դասակարգում՝ ըստ սոմատիկ բաղադրիչի, որը, տեխնիկական հարմարությունից ելնելով, ատենախոսության մեջ ներկայացված է այբբենական կարգով:

Այս գլխում ներկայացված են նաև սոմատիկ դարձվածքների մեկնաբանման հիմնական աղբյուրները, ինչպիսիք են՝ առասպելները ազգային ծիսակարգերը (հարսանիք, խնամախոսություն, հուղարկավորություն և այլն), առասպելները, կախարդանքները, առածները, որոնք սերնդեսերունդ փոխանցում են դարերի ընթացքում ձևավորված մշակույթը, որում վառ ձևով արտացոլվել են ժողովրդի իմաստությունը և տվյալ լեզվակիրների կյանքի փիլիսոփայություն:

Սոմատիկ դարձվածքների մեկնաբանման աղբյուրների շարքում հատկապես կարևորվում է ստուգաբանական մեկնաբանությունը: Անհնարին է մեկնաբանել դարձվածքները՝ անծանոթ լինելով տվյալ ժողովրդի պատմությանը, ավանդույթներին, քանի որ յուրաքանչյուր դարձվածք պարունակում է աշխարհի մասին անմիջական տեղեկատվություն: Դարձվածքներն իրենց վրա կրում են անցյալի պատմական դարաշրջանների կնիքը, որը և պայմանավորում է դրանց ազգամշակութային ինքնօրինակությունը: Հաշվի առնելով վերջինիս կարևորությունը՝ կատարել ենք նաև սոմատիկ որոշ դարձվածքների զուգադրական ստուգաբանական վերլուծություն, որի արդյունքում պարզվել է զուգադրվող դարձվածքների ստուգաբանական համապատասխանությունը. այն վերստին վկայում է դարձվածքների այս խմբի համընդհանրության մասին: Սակավաթիվ դարձվածքներ, որոնք ստուգաբանորեն տարբերվում են միմյանցից, տվյալ լեզվում ևս ունեն իրենց համարժեքները՝ մի մասն ազատ բառակապակցությունների տեսքով, մյուսները՝ նկարագրման այլ միջոցներով արտահայտված: Բացի այդ՝ ստուգաբանական վերլուծությունը թույլ է տալիս բացահայտելու դարձվածքների

ազգամշակութային ծածկագրերը, ինչպես նաև վերջիններիս հիմքում ընկած ժողովրդի մտածելակերպի տեղի ունեցող փոփոխությունները՝ կապված մշակութային կողմնորոշիչների հետ:

Ատենախոսության երրորդ գլուխը («Սոմատիկ դարձվածքների իմաստակառուցվածքային առանձնահատկությունները») բաղկացած է 8 ենթագլուխներից, որոնցից յուրաքանչյուրի մեջ ուսումնասիրվող դարձվածքները ենթարկվում են իմաստակառուցվածքային զուգադրական համապատասխան վերլուծության:

Մարդկային գործոնը դարձվածքների ծագման հարցում ակնհայտ է և անհերքելի, քանի որ դարձվածքների գերիշխող մասը այսպես կամ այնպես առնչվում է մարդու, նրա գործունեության տարբեր ոլորտների հետ: Բացի այդ՝ մարդը մշտապես ձգտում է արտաքին աշխարհի օբյեկտներին վերագրել մարդկային գծեր: Դեռ Շառլ Բալլին նշել է, որ «մարդկային բանականության հավերժ անկատարությունը արտահայտվում է նաև նրանում, որ մարդը միշտ ձգտում է “շնչավորել” շրջակա աշխարհը, նա չի կարող պատկերացնել, որ բնությունն անշունչ է և անհոգի, նրա երևակայությունը արտաքին աշխարհի առարկաներին շարունակ վերագրում է սեփական անձին բնորոշ գծեր և ձգտումներ»:¹¹

Դարձվածքների կազմում սոմատիզմների լայն կիրառումը զգալի չափով պայմանավորված է նրանց՝ լեզվի հնագույն շերտերից մեկը հանդիսանալու գործոնով:

Ուսումնասիրվող թեմատիկ խմբի դարձվածքների կազմում, որպես բաղադրիչ, անպայմանորեն առկա է սոմատիկ գոյական, որն ուղեկցվում է «բառային շրջապատով» (лексическое окружение): Ընդ որում, տվյալ խմբի անվանումն ամենևին չի նշանակում, որ սոմատիկ գոյականը համապատասխան դարձվածքում միշտ գլխավոր բաղադրիչ է: Դիտարկվող դարձվածքների շարքում քիչ չեն այն դեպքերը, երբ սոմատիկ գոյականը խաղում է երկրորդական դեր, իսկ «բառային շրջապատը», ընդհակառակը, գտնվում է գերիշխող դիրքում: Սոմատիկ դարձվածքների «բառային շրջապատը» կարող է բաղկացած լինել մեկ կամ մի քանի բառերից: Վերջինիս կազմում հանդիպում են մշտական բառեր, առանց որոնց դարձվածքը կորցնում է բուն իմաստը (օրինակ՝ ռուսական «не покладая рук» դարձվածքը միշտ ուղեկցվում է «работать» բայով), և կամընտրական (ֆակուլտատիվ) կամ փոփոխական բառեր, որոնք որևէ ձևով չեն խախտում դարձվածքի ամբողջականությունն ու չեն ազդում վերջինիս իմաստի վրա (օրինակ՝ *во все горло* դարձվածքը սովորաբար ուղեկցվում է «кричать» և «орать» հոմանշային բայերով, որոնցից որևէ մեկի ընտրությունը յուրաքանչյուր դեպքում կրում է կամայական բնույթ):

Հանդիպում են նաև սոմատիկ դարձվածքներ, որոնց բառային շրջապատը հաճախ սղվում է (սովորաբար բանավոր խոսքում), քանի որ այն քաջածանոթ է տվյալ լեզվակիրներին և հեշտությամբ կարող է վերականգնվել (օրինակ՝ *видеть (своими) собственными глазами* – (իր) սեփական աչքերով տեսնել):

¹¹ Балли Ш. Французская стилистика. М.: Эдиториал УРСС, 2001: 221.

Ռուսերենի և հայերենի սոմատիկ դարձվածքների վերլուծությունը իմաստակառուցվածքային տեսակետից թույլ է տալիս բացահայտելու դրանց միջև եղած նմանությունները ու տարբերությունները, ընդ որում, գերակշռում են նմանությունները, որը բացատրվում է առաջին հերթին սոմատիկ դարձվածքների ընդհանրությունությամբ: Նմանությունները կարող են պայմանավորված լինել նաև երկու լեզուներում նույն նշյալի՝ դենոտատի առկայությամբ: Օրինակ՝ ռուսերենի висеть на волоске դարձվածքի հոմանիշն է հայերենի «մազից կախված լինել» դարձվածքը: Բերված դարձվածքները լիարժեք հոմանիշներ են՝ չտարբերվելով անգամ որևէ բաղադրիչով: Մեր կարծիքով՝ երկու լեզուների դարձվածքների հիմքում ընկած գլխավոր բաղադրիչը (волос – մազ), խորհրդանշելով անկայունություն, երերունություն, վտանգ, միանալով համապատասխան բային (висеть – կախված լինել), որը ևս կրում է անկայունության իմաստ, դրա հետ միասին կազմավորում է միանգամայն համարժեք դարձվածքներ: Այլ կերպ ասած՝ կարելի է փաստել, որ նման դեպքերում երկու լեզուների լեզվակիրների մտածելակերպը, աշխարհընկալումը, պատկերացումները կոնկրետ երևույթների վերաբերյալ լիովին համընկնում են: Նման կերպով կարելի է բացատրել նաև золотые руки, золотое сердце – ոսկի ձեռքեր, ոսկի սիրտ դարձվածքների հոմանշությունը, որի առաջացումը, մեր կարծիքով, պայմանավորված է երկու կողմերի լեզվակիրների՝ ոսկի մետաղի մասին ունեցած միևնույն պատկերացմամբ: Ինչ վերաբերում է այն դեպքերին, երբ զուգադրվող սոմատիկ դարձվածքները կտրուկ տարբերվում են միմյանցից, ապա դա բացատրվում է միայն յուրաքանչյուր լեզվի ազգային առանձնահատկություններով, ազգային մտածելակերպով ու աշխարհընկալմամբ: Նման դարձվածքները միմյանցից հաճախ տարբերվում են հենց սոմատիկ բաղադրիչով: Օրինակ՝ ռուսերենի «мотать на ус» դարձվածքը հայերենում ներկայացված է «ականջին օղ անել» համարժեքով: Բերված դարձվածքներում գործածված են սոմատիկ տարբեր բաղադրիչներ՝ «ус» և «ականջ»: Մեր կարծիքով՝ այս դեպքում ևս արտացոլված է մտածելակերպի ու աշխարհընկալման տարբերությունը: Ինչպես երևում է, զուգադրվող դարձվածքների հիմքում ընկած են զգայական օրգաններ անվանող սոմատիզմներ: Նշենք, որ ռուսերենի «ус» սոմատիկ գոյականը թեև զգայական օրգանի անվանում չէ, այնուամենայնիվ իր դիրքով անմիջապես հարում է հոտառության օրգանին, և հենց այդ տեսանկյունից էլ կարելի է այն դիտարկել: Ներկայացրած դարձվածքներն ունեն հետևյալ իմաստը՝ <<չմոռանալ, ընդմիշտ հիշել>>: Հետաքրքիր է նկատել, որ եթե ռուս մարդու համար, ռուսական իրականության մեջ չմոռանալու, հիշեցնելու համար հատկանշվում է հոտառության օրգանը (ус/нос), ապա հայերենում առաջնությունը տրվում է լսողական օրգանին (ականջ): Եթե փորձենք վերլուծել «ականջին օղ անել» դարձվածքը, ապա բառացիորեն այն կնշանակի «ականջին կախել օղ», այսինքն՝ ականջօղ, որը քայլելիս կամ վազելիս կգրնգա, ինչը և թույլ չի տա ականջօղը կրողին մոռանալու այն մասին, ինչը պետք է «ականջին օղ անել»: Հենց այս տարբեր պատկերացումներն են ընկած զուգադրվող դարձվածքների հիմքում, ինչով և պայմանավորված է նրանց տարբերությունը:

Ինչպես նշել էինք, դարձվածքների ուսումնասիրվող խմբում պարտադիր է սովորել բաղադրիչի առկայությունը, որը բոլոր լեզուներում արտահայտվում է միևնույն համարժեք գոյականներով (օր.՝ ռուսերենում վերին վերջույթի անվանումը կրում է «рука» սովորական գոյականը, որի հայերեն համարժեքն է «ձեռք» գոյականը, ուստի և կարելի է ենթադրել, որ սովյալ սովորական բաղադրիչը պարունակող ռուսական դարձվածքը հայերենում պետք է ունենա համարժեք սովորական գոյականով արտահայտված դարձվածք, սակայն ուսումնասիրության արդյունքում բացահայտվում են դեպքեր, երբ զուգահեռվոր դարձվածքները միմյանցից տարբերվում են հենց սովորական բաղադրիչով (с глазу на глаз - երես առ երես, сбывать с рук - զլուխն ազատել և այլն):

Երբեմն ռուսական դարձվածքի հայկական հոմանիշը ներկայացված է առանց սովորական բաղադրիչի (руки не доходят - ժամանակ չկա, сбывать с рук - մեկի վրա ստացնել, нос не дорос - ուժը չի պատում):

Չուգահեռական ուսումնասիրությունը բացահայտում է նաև այլ բնույթի անհամապատասխանություններ, երբ ռուսական դարձվածքի հայերեն համարժեքը ներկայացված է ոչ թե դարձվածքով, այլ մեկ բառով (клевать носом – ննջել) կամ իմաստի նկարագրման միջոցով (попадать пальцем в небо - կոպիտ վրիպել):

Քերականական տեսակետից կարելի է առանձնացնել սովորական դարձվածքների երկու տեսակ՝ անվանողական դարձվածքներ, որոնք իրենց ձևով համապատասխանում են բառակապակցությունների (օրինակ՝ правая рука - աջ ձեռք, перед глазами - աչքի առաջ), և հաղորդակցական դարձվածքներ, որոնք ունեն ինքնուրույն նախադասության ձև (օրինակ՝ в глазах помутнело - աչքերի առաջ մթնեց, сердце кровью обливается - սրտից արյուն է կաթում):

Սովորական դարձվածքների կազմում հաճախ նկատվում են տարատեսակ փոխակերպումներ, ինչպիսիք են կամընտրական բաղադրիչի ընդգրկումը, շրջադասությունը (инверсия), նմանեցումը (ассоциация):

Երկու լեզուներում էլ հանդիպում են դարձվածքներ, որոնց բաղադրակազմ կարող են ներթափանցել տատանվող բաղադրիչներ, որոնք որևէ իմաստային փոփոխություն չեն առաջացնում դարձվածքում (не верить глазам – не верить собственным глазам, աչքերին չհավատալ – սեփական աչքերին չհավատալ): Ինչ վերաբերում է շրջադասությանը, ապա ռուս դարձվածաբանության ոլորտում այդ երևույթը որոշակի իմաստով համընդհանուր է, քանի որ ռուսական դարձվածքների գերիշխող մասը ունակ է ենթարկվելու շրջադասային փոփոխության, մինչդեռ հայերենում այն հաճախականություն չունի:

Բացի նշված փոփոխություններից՝ լեզվի համակարգում տեղի են ունենում նաև պատմական զլրբալ փոփոխություններ: Խոսքը վերաբերում է հնացած դարձվածքների կազմի «նորոգմանը»: Այս դեպքում հնացած դարձվածքներն ու դրանց նորացած հոմանշային ձևերը համագոյակցում են լեզվում, և դրանց միջև

ընտրությունը յուրաքանչյուր դեպքում կապված է ոճաբանական գործոնի հետ: Որոշ դեպքերում էլ դարձվածքների նոր ձևերը դուրս են մղում լեզվից դրանց հնացած ձևերը: Նշված փոփոխությունները բնորոշ են երկու զուգադրվող լեզուներին, սակայն ռուսերենի դարձվածաբանության ոլորտում շրջադասությունը որոշակի իմաստով համընդհանուր երևույթ է, քանի որ ռուսաց լեզվի դարձվածքների ճնշող մեծամասնությունը հեշտությամբ կարող է ենթարկվել նման փոփոխության, մինչդեռ հայերենում այդ երևույթն աչքի չի ընկնում մեծ հաճախականությամբ:

Ռուսերենի սոմատիկ դարձվածքների ձևաբանական կաղապարների ուսումնասիրության ընթացքում առանձնացրել ենք առավել տարածված, հաճախական հետևյալ նմուշները.

- ածական + գոյական (*правая рука – աջ ձեռք*).
- կապ + գոյական + սեռական հոլով գոյական (*до мозга костей – մինչև ուղն ու ծուծը*).
- գոյական + կապ + գոյականի հոլովածն (*море по колено – ծովը ծնկից է*).
- կապ + ածական + գոյական (*от чистого сердца – մաքուր սրտով*).
- բայ + կապ + գոյականի հոլովածն (*обводить вокруг пальца – մալների վրա խաղացնել*).
- դերբայ + գոյական /գոյական և կապ (*сложь руки – ձեռքերը ծալած*).
- կապ + ածական + գոյական (*на широкую ногу – առոք-փառոք*).
- գոյական + կապ + գոյական (*рука об руку – ձեռք ձեռքի*).
- կապ + գոյական (*под носом – քթի տակ*).
- ստորադասական շաղկապներով դարձվածքներ (*как снег на голову – անսպասելիորեն*);

- ժխտական մասնիկներով դարձվածքներ (*руки не доходят – ժամանակ չկա*):

Դժվար չէ նկատել, որ ներկայացրած դարձվածքային նմուշներն առավել բնորոշ են ռուսերենին, իսկ դրանց հայերեն համարժեքները հաճախ զգալիորեն տարբերվում են իրենց կառուցվածքով:

Երրորդ գլխում կատարվում է նաև սոմատիկ դարձվածքների իմաստի զուգադրական վերլուծություն: Նշված տեսանկյունից սոմատիկ դարձվածքները կարելի է բաշխել իմաստային հետևյալ խմբերի՝

- մարդկային փոխհարաբերություններ, մարդու և շրջակա միջավայրի փոխհարաբերություններ արտահայտող դարձվածքներ (*обводить вокруг пальца – մալների վրա խաղացնել, махнуть рукой – ձեռք քաշել*).
- մարդու ֆիզիկական վիճակն ու հոգեվիճակն արտահայտող դարձվածքներ (*еле держаться на ногах – ուրքերի վրա հագիվ կանգնել; сердце кровью обливается – սրտից արյուն է կաթում*).
- մարդկային հատկանիշների որակավորում, մարդուն ներքուստ բնութագրող դարձվածքներ (*ветер в голове – գլխում քամի է; золотое сердце – ոսկի սիրտ*).

● մարմնի մասերի հետ կապված ավանդական խորհրդանշային իմաստ ունեցող դարձվածքներ (*ножать руку - ձեռքը սեղմել; по пальцам можно пересчитать - մալիների վրա կարելի է հաշվել*).

● .տարածական իմաստ ունեցող դարձվածքներ (*под рукой - ձեռքի տակ; рукой подать - ձեռքը մեկնես՝ կհասնի*).

● շարժման արագություն արտահայտող դարձվածքներ (*в мгновение ока - մի ակնթարթում*).

● գործողության որակական գնահատանք արտահայտող դարձվածքներ (*намылить голову - գլխին շան լալի թափել*).

● հասարակության մեջ մարդու կախյալ դիրքը ցուցանող դարձվածքներ (*падать в ноги - ուղքերն ընկնել*).

● խոսելաճը բնորոշող դարձվածքներ (*чесать зубы - դալարկ դուրս փայլ*).

● աշխատանքի նկատմամբ մարդու վերաբերմունքը ցույց տվող դարձվածքներ (*сложу руку - ձեռքերը ծալած*).

● մարդու հոգեվիճակն արտահայտող դարձվածքներ (*выплакать все глаза - աչքերը ցամաքել*).

● տեսողական կամ լսողական ընկալում ցուցանող դարձվածքներ (*краем глаза - ասքի պոչով, краем уха - ականջի ծայրով*).

● մարդու արտաքին բնութագիր պարունակող դարձվածքներ (*кожа да кости - կաշին ու ոսկորները*).

● մարդու մտավոր ունակություններն արտահայտող դարձվածքներ (*голова работа - գլուխն աշխատում է*).

● մարդու ֆիզիկական վիճակը ցույց տվող դարձվածքներ (*валиться с ног - ուղքերի վրա հազիվ կանգնել*).

● ժամանակի իմաստ արտահայտող դարձվածքներ (*руки не доходят - ժամանակ չկա*):

Նշենք, որ սոմատիկ դարձվածքների իմաստային դաշտը չի սահմանափակվում ներկայացրած խմբերով. այն անհամեմատ ավելի լայն է:

Ներկայիս հումանիտար գիտությունն ունի մարդակենտրոն մոտեցում, և այդ իսկ պատճառով ժամանակակից լեզվաբանության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում մարդկային հույզերի ուսումնասիրությունը: Ինչ վերաբերում է սոմատիկ դարձվածքներին, ապա բնութագրվելով ակնհայտ մարդակենտրոն ուղղվածությամբ՝ վերջիններս անմիջականորեն կապված են մարդու հուզական աշխարհի հետ: Հաղորդակցման ընթացքում ոչ վերբալ միջոցներով փոխանցվում է որոշակի տեղեկատվություն, որը բնութագրում է մարդուն, նրա հոգեվիճակը, վարքագիծը և այլն: Նշված իմաստը կրող դարձվածքներն առկա են աշխարհի բոլոր լեզուների լեզվապատկերներում և կրում են համընդհանուր բնույթ, քանի որ սերտորեն կապված լինելով ֆիզիոլոգիայի հետ՝ դրանք բնորոշ են բոլոր մարդկանց՝ անկախ նրանց սոցիալական և ազգային պատկանելիությունից: Ատենախոսության այս մասում առանձնացվել են ամենաբնորոշ դրական ու բացասական հույզերը, որոնք արտահայտված են

համապատասխան դարձվածքներում, և կատարվել է վերջիններիս զուգադրական վերլուծությունը:

Սոմատիկ դարձվածքների իմաստային զուգադրական վերլուծությունն անցկացվել է երկու գլխավոր ուղղությամբ՝ յուրաքանչյուրի համար հատկացնելով մեկական ենթագլուխ՝ դարձվածքների դասակարգում՝ ըստ սոմատիկ բների ու խոսքիմասային պատկանելիության: Առաջին դասակարգման համար ընտրվել են լեզվում ամենալայն հաճախականությամբ աչքի ընկնող սոմատիկ բները՝ голова (գլուխ), глаз (աչք), нога (ոտք), нос (քիթ), рот (բերան), рыба (ծեղք), ухо (ականջ), язык (լեզու), և կատարվել է դրանց հանգամանալի զուգադրական իմաստային վերլուծություն, իսկ ինչ վերաբերում է ըստ խոսքի մասերի դասակարգմանն, ապա ներկայացվել է երկու դասակարգում՝ գուտ իմաստային և տրամաբանական: Սովորաբար, երբ դարձվածքներն անվանում են բայական, գոյականական, ածականական, մակբայական, նկատի ունեն դրանց գերիշխող բաղադրիչի ձևաբանական արժեքը: Սակայն հաճախ այս կամ այն խոսքի մասով արտահայտված գլխավոր բաղադրիչի դիրքը համապատասխան դարձվածքի կազմում նկատելի նվազեցված կարող է լինել, իսկ տրամաբանորեն ամբողջ դարձվածքն իր իմաստով ավելի մոտ է մեկ այլ խոսքի մասի (օրինակ՝ «*рыкоў nodam*» - «*ծեղքը մեկնես՝ կհասնի*») դարձվածքները հայտնի են որպես գոյականական դարձվածքներ, քանի որ դրանց գերիշխող բաղադրիչը (рыка - ծեղք) արտահայտված է գոյականով: Միաժամանակ այդ անդամն իմաստային առումով գտնվում է թույլ դիրքում, ընդհակառակը, դարձվածքում ավելի ցայտուն է մակբայական իմաստը, և այն կարելի է փոխարինել համարժեք մակբայով (бонизко - մոտիկ), այդ պատճառով էլ, տրամաբանական դասակարգման սկզբունքներից ելնելով՝ նշված դարձվածքն ընդգրկվել է մակբայական դարձվածքների խմբում:

Երրորդ գլխի վերջին ենթագլխում ուսումնասիրվում են այնպիսի երևույթներ, ինչպիսիք են դարձվածքների հոմանշությունը, տարբերակայնությունը, հականշությունն ու բազմիմաստությունը: Վերլուծության ընթացքում հանգում ենք այն եզրակացության, որ զուգադրվող երկու լեզուներում էլ նշված երևույթներից առավել տարածված են հոմանշությունը և տարբերակայնությունը, իսկ բազմիմաստությունն ու հականշությունը նույն թեմատիկ խմբի դարձվածքների շրջանակներում ավելի հազվադեպ են հանդիպում: Նշված երևույթների վերլուծության ընթացքում առանձնացրել ենք նաև հոմանշային շարքեր, կատարել երկու բավականին նման երևույթների՝ հոմանշության ու տարբերակայնության տարանջատում՝ ընդգծելով դրանցից յուրաքանչյուրի բնորոշ հատկանիշները:

Երկու լեզուներում էլ . դարձվածքների տարբերակների առաջացման հիմնական պատճառներ կարող են հանդիսանալ՝

- դարձվածքի բաղադրիչների փոխարինումը (*новострить уши/слух; ականջները/խողոջությունը սրել*).
- էլիպսումը (կրճատում), որով արտահայտվում է լեզվի տնտեսման սկզբունքը (*найтн обцаы язык - найтн язык, ընդհանուր լեզու գրինել - լեզու գրինել*).

● բառային ներթափանցումները (лексические вкрапления) (*отвечать головой – отвечать собственной головой, գլխով պատրաստիսան փալ – սեփական գլխով պատրաստիսան փալ*).

● շրջադասությունը (*повесить нос – нос повесить, քիթը կախել – կախել քիթը*):

Բացի այդ՝ ռուսերենի սոմատիկ դարձվածքների տարբերակային ձևերի առաջացումը կարող է պայմանավորված լինել նաև հետևյալ հանգամանքներով՝

● պատկերի զարգացմամբ, երբ նոր դարձվածքը չունի ոչ մի ընդհանուր բաղադրիչ հնի հետ, բայց իմաստային կապն ակնհայտ է (*далеко пошел – рукой не достать*).

● տեղայնացմամբ, որի ժամանակ դարձվածքում գործածվում են տվյալ տարածքին կամ որոշակի սոցիալական խմբին բնորոշ բառապաշարային տարրեր (*повесить нос – повесить нос на квинту*);

● ոճային երանգավորմամբ (*во все горло – во всю глотку*):

Այս գլխում դիտարկվում են նաև դարձվածքների կապը լեզվի այլ միավորների՝ բառակապակցությունների և նախադասությունների հետ, դրանց փոխադարձ փոխարինման հնարավորությունները: Անդրադարձել ենք նաև սոմատիկ դարձվածքների ու բարդ բառերի միջև եղած կապին, որը, սակայն, չի առանձնանում հաճախականությամբ. (օրինակ՝ *скалить зубы – зубоскалить; бить челом – челобитная*):

Ատենախոսության **չորրորդ գլուխը** («**Սոմատիկ դարձվածքների ոճային բնութագրումը և գործածությունը խոսքում**») նվիրված է ռուսերենի և հայերենի սոմատիկ դարձվածքների զուգադրական ոճաբանական վերլուծությանը: Հայտնի է, որ դարձվածքները կազմում են լեզվի ամենավառ, ամենապատկերավոր շերտը, և այդ իսկ պատճառով դարձվածաբանական ցանկացած ուսումնասիրության ընթացքում կարևոր տեղ է պետք հատկացնել ոճաբանական վերլուծությանը: Ներկայացրել ենք սոմատիկ դարձվածքների ոճաբանական դասակարգում՝ ըստ լեզվում ընդունված ավանդական դասակարգման՝ առանձնացնելով չորս հիմնական ոճային խումբ՝ միջոճային սոմատիկ դարձվածքներ, խոսակցական սոմատիկ դարձվածքներ, գրքային սոմատիկ դարձվածքներ, հնաոճ սոմատիկ դարձվածքներ: Թվարկված ոճային խմբերից առավել լայն տարածում են ստացել խոսակցական սոմատիկ դարձվածքները:

Ոճաբանական տեսակետից առանձնակի տեղ է զբաղեցնում հնաոճ դարձվածքների խումբը, որը գրքային ոճի շրջանակներում հատուկ շերտ է կազմում: Հնաոճ սոմատիկ դարձվածքների օգտագործումը գեղարվեստական գրականության մեջ պատկերավորություն է հաղորդում տեքստին և հաճախ օգնում է վերարտադրելու համապատասխան դարաշրջանի գունդերանգը: Նշելի է նաև, որ որոշ հնաոճ դարձվածքներ ժամանակի ընթացքում ամրագրվում են լեզվի խոսակցական շերտին: Նման դեպքերում հնաոճ դարձվածքների գործածությունը սովորաբար պայմանավորված է լինում հետևյալ պատճառներով՝ նոր համարժեքի բացակայությամբ կամ ամբողջ դարձվածքին որոշակի գունդերանգ հաղորդելու նպատակով:

Բացի ներկայացված հիմնական խմբերից՝ երկու լեզուներում էլ հանդիպում են այնպիսի դարձվածքներ, որոնք տարբերվում են իրենց ոճային յուրահատուկ երանգա-

վորմամբ: Դրանցից են, օրինակ, հեգնական երանգավորում ունեցող սոմատիկ դարձվածքները (*пальца в рот не клади - մարդ բերանը չդնես*), կատակային երանգավորմամբ առանձնացող դարձվածքները (*прозлотить язык - լեզուն կոլ կալ*), հասարակ երանգավորմամբ բնութագրվող դարձվածքները (*пожурать глазами - աչքերով ուզես*) և այլն:

Սոմատիկ դարձվածքների զուգադրական ոճաբանական վերլուծությունը հանգեցնում է այն եզրակացության, որ զուգադրվող դարձվածքների գերակշռող մասն անմիջականորեն կապված է ժողովրդական խորհրդանիշների հետ, որը պայմանավորված է դրանց կազմում սոմատիկ բաղադրիչների առկայությամբ, որոնց անմիջական մասնակցությամբ էլ իրականացվում են տարբեր ժեստեր: Օրինակ՝ *махнуть рукой - ձեռք քաշել* սոմատիկ դարձվածքներում նկատվում է մարդու վերին վերջույթով իրականացվող ժեստային շարժում , որը բացատրվում է զուգադրվող լեզուների ազգային առանձնահատկություններով: Ընդ որում, հայկական *ձեռք քաշել* դարձվածքում ժեստի ազդեցությունն ավելի ուժգին է. եթե *ձեռք քաշել* արտահայտությունը բառացիորեն կարելի է ընկալել որպես ռուսերեն արտահայտության համարժեք, ապա կարելի է ենթադրել, որ այդ դարձվածքի ծածկագրային իմաստը ծագել է «*ձեռքը վրան պահել*» հականիշ դարձվածքից, որն իր հերթին բառացիորեն համագոր է ռուսական «*держать руку на ком-то*» արտահայտությանը՝ *պաշտպանել*:

Բերենք մի քանի այլ օրինակներ՝ *ломать голову- գլուխ ջարդել, вылететь из головы - գլխից դուրս թռչել* դարձվածքները կապված են մարդու մտավոր գործունեության հետ, որն իր հերթին պայմանավորված է նրանց կազմում *голова (գլուխ)* սոմատիկ բաղադրիչի առկայությամբ; *держать ухо остро - ականջները սրած պահել* դարձվածքներում արտացոլում է ստացել մարդու լսողական ունակությունը, որն իրականացվում է *ухо (ականջ)* սոմատիկ բաղադրիչի անմիջական մասնակցությամբ, *глаза на лоб полезли - աչքերը ճակատը թրան* դարձվածքներում արտահայտված է մարդու դիմախաղային արձագանքը համապատասխան իրավիճակին, որը հնարավոր է իրականացնել *глаз (աչք)* տեսողական ու ամենարտահայտիչ մարդկային օրգանի միջոցով, *совать нос - քիթը խոթել* դարձվածքներում արտահայտված է *нос (քիթ)* օրգանի ոչ թե գլխավոր՝ հոտառական գործառույթը, այլ նրա մի այլ հատկանշական բնութագիր՝ վերջինիս ձևն ու դիրքը դեմքի վրա, այսինքն՝ հանդիսանալով միակ արտահայտված դիմային օրգան, նրան վերագրում են խցկվելու ունակություն այն տեղերը, որոնք անհասանելի են դիմային այլ օրգաններին:

Ներկայացվող գլխում կատարված ոճաբանական վերլուծությունը ցույց է տալիս, որ լեզվում հաճախ նկատվում են տարբեր ոճերի փոխներթափանցումներ, մոտեցումներ: Այդ փաստը, անշուշտ, ծառայում է տարբեր նպատակների: Օրինակ՝ խոսակցական դարձվածքների կիրառությունը խոսակցական ոճի սահմաններից դուրս կարող է նպաստել ներքին խոսքի հաղորդմանը: Նշված երևույթն առավել ցայտուն արտացոլում է գտնում գեղարվեստական գրականության մեջ, երբ հեղինակը միտումնավոր գործածում է խոսակցական ոճի դարձվածքներ՝ այն ծառայեցնելով որոշակի նպատակի: Օրինակ՝ *Я ломал себе голову, раздумывал и неотступно, хотя и по мере возможности скрыто наблюдал за Зинаидой*» (И. Тургенев, Первая

любовь). – **Ես գլուխ էի կոտրում**, մկտրում էի և համառորեն, թեպետև հնարավորինս գաղտնի հետևում էի Ջինաիդային»: Նշենք նաև, որ այս կամ այն խոսակցական դարձվածքի լայնորեն գործածումը գրքային ոճի շրջանակներում հաճախ հանգեցնում է նրա ոճային երանգավորման փոփոխությանը. դրանք կարծես «հղկվում են», կորցնում խոսակցական բնույթը և ձեռք բերելով չեզոք երանգավորում՝ աստիճանաբար ներթափանցում են գրքային ոճի դարձվածային ֆոնդ ու դառնում գրական լեզվի մշտական ուղեկիցներ:

Այս գլխում կատարված ոճաբանական վերլուծության ընթացքում, բացի վերոնշյալ հիմնական ոճային խմբերից ու որոշ ենթախմբերից, առանձնացրել ենք նաև կախարդանք, անեծք, երդում, սնահավատություն արտահայտող սոմատիկ դարձվածքների ենթախումբ, որը սովորաբար լեզվում ներկայացված է առածներով, թևավոր արտահայտություններով և տարբերվում է ազգային անկրկնելի վառ երանգավորմամբ: Նման դարձվածքներում առավել վառ են արտացոլված ազգային ավանդույթները, սովորույթները, այս կամ այն լեզվի հիմքում ընկած մշակութային առանձնահատկությունները, քանի որ հենց այդ ոլորտն է սերտորեն կապված ժողովրդական բանահյուսության, ժողովրդի իմաստնության հետ:

Ջուգադրվող լեզուների նշված ենթախմբին պատկանող՝ դարձվածքները գրեթե միշտ կտրուկ տարբերվում են միմյանցից թե՛ իրենց կառուցվածքով, թե՛ բաղադրակազմով, որը պայմանավորված է նրանց հիմքում ընկած երկու լեզուների լեզվակիրների լեզվամշակութային մտածելակերպի տարբերությամբ (օրինակ՝ *логну μου гласа - սուլը գեպի՞նը մկնի*): Ավելին՝ այս ենթախմբում հաճախ հանդիպում են հայերեն դարձվածքներ, որոնք ռուսերենում չունեն որևէ համարժեք. դա ևս բխում է լեզվամշակութային ավանդույթների առանձնահատկություններից:

Որպես ավելի մանր ոճային ենթախումբ՝ կարելի է առանձնացնել նաև գիտության կոնկրետ բնագավառների հետ կապված կամ տերմինաբանական արտահայտություններով սոմատիկ դարձվածքներ, որոնք լեզվում չեն ստացել լայն տարածում և այդ իսկ պատճառով ատենախոսության մեջ չեն ենթարկվել առանձին վերլուծության:

Սոմատիկ դարձվածքների ոճային ուղղվածության ձևավորմանը հաճախ նպաստում են պատկերավորման տարբեր միջոցներ, որոնցից առավել տարածված են համեմատությունն ու չափազանցությունը: Որոշ սոմատիկ դարձվածքների հիմքում ընկած պատկերավոր համեմատությունները նպաստում են դարձվածքի շեշտադրման ուժգնությանը և հատուկ արտահայտչություն են հաղորդում նրան (օրինակ՝ *как svou пять пальцев - հինգ մատիս պես, словно бельмо на глазу - աչքի փուշը լինել*): Նման դարձվածքներում ռուսերենում օգտագործվում են *с, как, точно, словно, будто*, իսկ հայերենում՝ *պես, նման, կարծես, չափ* շաղկապները:

Մի այլ պատկերավորման միջոցի՝ չափազանցության օգնությամբ, որն ապահովում է համապատասխան սոմատիկ դարձվածքի ոճային հիմնաերանգը, ընդգծվում է դարձվածքի իմաստային առանցքը (*сердце кровью обливается – սրտից արյուն է կաթում; ломать голову – գլուխ ջարդել*): Ջուգադրական վերլուծությունից պարզվում է, որ չափազանցություն .արտահայտող ռուսերենի և հայերենի սոմատիկ դարձվածքները կապված են հոմանշային կապով, որը ցույց է տալիս, որ տվյալ լեզվա-

կիրներին միավորում են միևնույն պատկերացումները որոշակի երևույթների, զգացողությունների, իրավիճակների առումով, որոնք ընկած են դիտարկվող դարձվածքների հիմքում: Սակայն հաճախ էլ նկատվում է հակառակը. զուգադրվող լեզուներում հանդիպում են սոմատիկ դարձվածքներ, որոնք բնորոշ են միայն տվյալ լեզվամշակույթին, ինչը վկայում է զուգադրվող լեզվամշակույթներում տարբեր հասկացությունների առկայության ու դրանից բխող լեզվակիրների տարբեր պատկերացումների մասին: Օրինակ՝ հայկական «մի բուռ» դարձվածքը (ծագում է «բռունցք» գոյականից - «кылак») արտահայտում է ոչ թե չափազանցություն, այլ նվազաբանություն (литота), ինչը բացատրվում է «բուռ» գոյականի որպես չնչին քանակ ենթադրող քանակական բնութագրման ընկալմամբ, մինչդեռ ռուսերենում «кылак» սոմատիկ գոյականն ունի խորհրդանշանային այլ բնութագիր և չի կարող օգտագործվել որպես չափի միավոր (*собрать в кылак; держать в кылаке*):

Հայտնի է, որ դարձվածքների գլխավոր առանձնահատկություններից է նրա ցայտուն արտահայտված ազգային բնույթը: Հաշվի առնելով այդ գործոնը՝ կարելի է հասկանալ, թե ինչու մի լեզվում ընդունված և ամրագրված դարձվածքները հաճախ անհնար է բառացիորեն արտահայտել մեկ այլ լեզվով: Այստեղ տեղին է զուգահեռ անցկացնել դարձվածաբանության և պոեզիայի միջև: Ակնհայտ է, որ բնօրինակը միշտ էլ ավելի մեղեդային է, բարեհունչ, ներդաշնակ, իսկ թարգմանության մեջ ավելի հաճախ զգացվում է դիտման: Մեր կարծիքով՝ այս փաստը ևս պայմանավորված է տվյալ լեզվի ազգային առանձնահատկություններով և բնորոշ է ազգային գունդրանգին: Այդ իսկ պատճառով բոլոր ժամանակների լավագույն թարգմանիչներն աշխատել են չթարգմանել այն բառերն ու արտահայտությունները, որոնց ոճաբանական համարժեքները չեն գտնվել կամ թերի են թվացել թարգմանության լեզվում: Արդյունքում դա նպաստել է բնագրի ազգային ոգին և գունդրանգը պահպանելուն:

Ինչպես այլ լեզվային միավորներ, դարձվածքները ևս գործածվում են համաձայն լեզվում ընդունված որոշակի նորմերի, սակայն խոսակցական լեզվում երբեմն նրանք կարող են ընդունել արտահայտման այլ ձևեր: Նման դեպքերը ճիշտ չէ դիտարկել որպես շեղումներ, քանի որ նորմի պահանջները վերաբերում են գլխավորապես լեզվին, իսկ խոսքի սահմանները բավականին լայն ու շարժուն են. այստեղ կարող են տեղ գտնել դարձվածքի անհատական կամ հեղինակային կիրառում, ընդունված ձևի փոխակերպում և այլ երևույթներ, որոնցից յուրաքանչյուրը ծառայեցված է որոշակի նպատակի:

Ինչպես նշել էինք, ռուսերենի և հայերենի սոմատիկ դարձվածքների մեծ մասը հիմնականում համընկնում է թե՛ իմաստակառուցվածքային, թե՛ ոճային տեսանկյունից, որը բացատրվում է այդ միավորների ընդհանրություններով: Սակայն վերլուծությունն ի հայտ է բերում դրանց միջև նաև բազմաթիվ անհամապատասխանություններ, որոնք պայմանավորված են տարբեր լեզվամշակույթների առանձնահատկություններով:

Ատենախոսության վերջում կատարված է վերլուծության ամփոփում, և ներկայացված են **եզրակացությունները**:

Նշենք, որ սոմատիկ դարձվածքները մինչ այժմ հայ լեզվաբանության շրջանակներում չեն ստացել առանձին լուսաբանում, չկան նաև այդ թեմատիկ խմբի դարձվածքների զուգադրական ուսումնասիրություններ, ինչպես նաև բացակայում են սոմատիկ դարձվածքների երկլեզու բառարաններ: Այդ առումով սույն աշխատությունը ռուսերենի և հայերենի սոմատիկ դարձվածքների զուգադրական ուսումնասիրության առաջին փորձն է, ատենախոսության հավելվածում առաջարկվող բառարանի օրինակը ևս առաջինն է այդ ոլորտում:

Սոմատիկ դարձվածքների զուգադրական ուսումնասիրությունը թույլ է տալիս բացահայտելու զուգադրվող դարձվածքների միջև եղած ընդհանրություններն ու անհամապատասխանությունները՝ հանգեցնելով հետևյալ եզրակացություններին.

1. Սոմատիկ դարձվածքներն անմիջականորեն կապված են դիմախաղային և ժեստային գործողությունների , լեզվի ոչ վերբալ ծածկագրերի հետ. դա պայմանավորված է սոմատիկ բաղադրիչի գործառույթային հատկություններով:

2. Պատմական զարգացման հետևանքով երկու լեզուներում էլ սոմատիկ շատ դարձվածքներ ենթարկվել են տարատեսակ փոփոխությունների, որոնք առաջացրել են դրանց բաղադրակազմի փոփոխություն և իմաստային ամբողջականության որոշակի խախտումներ: Նման փոխակերպումներից առավել տարածված են դարձվածքի իմաստի ընդլայնումը, դարձվածքի իմաստի նեղացումը, դարձվածքի իմաստի վերացարկումը, իմաստային տեղաշարժը, բաղադրիչների փոխարինումը:

3. Մարմնի մասեր անվանող սոմատիկ գոյականների պայմանական դասակարգումն ընդգրկում է վերջիններիս հետևյալ հատկություններն ու գործառույթները՝

- կենտ/զույգ.
- դիմային/մարմնային.
- դիմախաղային/ժեստային.
- ակտիվ/պասիվ.
- ազատ գործող/ամրացած.
- ռացիոնալ/զգայական:

4. Երկու լեզուներում էլ առավել հաճախականությամբ ակնառու են հետևյալ սոմատիկ գոյականները՝ *голова (գլուխ), глаз (աչք), рука (ձեռք), нога (ոտք), рот (քերան), ухо (ականջ), язык (լեզու)*:

5. Ռուսերեն և հայերեն սոմատիկ դարձվածքների զուգադրական իմաստաբանական վերլուծությունն ի հայտ է բերում նկատելի տարբերություններ դրանց միջև, որոնք պայմանավորված են այդ լեզուներին հատուկ ազգամշակութային տարբեր առանձնահատկություններով, իսկ բազմաթիվ նմանությունները բացատրվում են երկու լեզուներում համընդհանուր խորհրդանիշների առկայությամբ, որոնք նաև բնորոշ են շատ լեզուների ու մշակույթների:

6. Կառուցվածքային տեսանկյունից սոմատիկ դարձվածքները որպես պարտադիր բաղադրիչ ներառում են սոմատիկ գոյական և ազատ բառային շրջապատ, որը կարող է բաղկացած լինել թե՛ մշտական, թե՛ փոփոխական բաղադրիչներից:

7. Սոմատիկ դարձվածքների առանցքային կենտրոնը ոչ միշտ է ներկայացված լինում սոմատիկ բաղադրիչով:

8. Ռուսերենի եւ հայերենի սոմատիկ դարձվածքների բառային շրջապատի միջև ոչ միշտ է նկատվում համապատասխանություն. դա բացատրվում է լեզուներից յուրաքանչյուրի ազգային առանձնահատկություններով, իսկ ավելի հաճախ հանդիպող համապատասխանությունները բխում են սոմատիկ դարձվածքների համընդհանուր բնույթից:

9. Սոմատիկ դարձվածքների կազմը կարող է ենթարկվել փոխակերպումների, որոնցից առավել տարածված են լրացուցիչ բաղադրիչների ներթափանցումը, նմանակումը և շրջադասությունը: Հարկ է նաև նշել, որ թվարկած փոխակերպումները որևէ կերպ չեն անդրադառնում համապատասխան դարձվածքների իմաստի վրա:

10. Սոմատիկ դարձվածքների իմաստակառուցվածքային դասակարգումն ընդգրկում է հետևյալ խմբերը՝ բայական, գոյականական, ածականական, մակբայական:

11. Ռուսերենի և հայերենի բայական սոմատիկ դարձվածքների քերականական ձևերի միջև նկատվող որոշակի տարբերությունները հիմնականում պայմանավորված են այն փաստով, որ զուգադրվող լեզուներում բայով արտահայտված կատարյալի և անկատար կերպերի գործողությունները ձևակերպվում են քերականական տարբեր միջոցներով, իսկ գոյականական սոմատիկ դարձվածքների միջև հանդիպող անհամապատասխանությունները կապված են հայերենում գոյականի սեռի բացակայության հետ:

12. Համապատասխան դարձվածքների բաղադրիչներ հանդիսացող գոյականների հոլովածը ռուսերենում սովորաբար կազմվում է կապի, իսկ հայերենում՝ վերջավորության փոփոխության կամ որոշիչ հոդի միջոցով:

13. Սոմատիկ դարձվածքներին բնորոշ են բազմիմաստություն, տարբերակային ձևեր, հոմանշություն, հականշություն:

14. Ռուսերենի և հայերենի սոմատիկ դարձվածքները միմյանց նկատմամբ կարող են լինել դարձվածքային հոմանիշներ, դարձվածքային համարժեքներ կամ չունենալ որևէ համարժեք:

15. Սոմատիկ դարձվածքների հոմանշային շարքի գերիշխող դարձվածք է համարվում ռճային չեզոքությամբ և գործածության հաճախականությամբ աչքի ընկնող դարձվածքը:

16. Լեզվի դարձվածային և բառային միավորների միջև առկա է անմիջական կապ:

17. Սոմատիկ դարձվածքները կարող են ունենալ նաև շարահյուսական համարժեքներ:

18. Սոմատիկ դարձվածքների լեզվամշակութային առանձնահատկությունների, դրանց՝ ոչ վերբալ լեզվի հետ ունեցած կապի ուսումնասիրությունը, ինչպես նաև խոսքում դրանց ճիշտ և գրագետ կիրառությունը հնարավորություն է տալիս ներթափանցելու այլ լեզվամշակույթներ և զգալիորեն հեշտացնում է միջմշակութային հաղորդակցման գործընթացը:

19. Սոմատիկ դարձվածքներն առանձնանում են ոճային երանգավորման հագեցվածությամբ:

20. Սոմատիկ դարձվածքների շրջանակներում հաճախ նկատվում են ոճային փոխներթափանցումներ, ոճերի միահյուսում:

21. Սոմատիկ դարձվածքները սերնդեսերունդ փոխանցում են ժողովրդական ավանդույթները, շունչը և ժողովրդի ազգամշակութային ժառանգությունը:

22. Ինչպես մշակույթը, այնպես էլ մտածելակերպը կարող են արտացոլել ու վերարտադրել տարբեր ժամանակաշրջանների և ժողովրդի տարբեր շերտերի մշակութային ավանդույթները: Մշակութային կողմնորոշիչների պատմական փոփոխության դեպքում փոխվում է նաև համապատասխան դարձվածքների հիմքում ընկած պատկերների և խորհրդանիշների մեկնաբանումը:

23. Զուգադրվող լեզուների հուզական ոլորտի դարձվածքներով արտահայտված աշխարհի պատկերները հիմնականում համընկնում են, քանի որ դրանց հիմքում ընկած հույզերը բնութագրվում են հոգեբանական ընդհանրությամբ, սակայն նման տիպի որոշ դարձվածքներում երբեմն արտացոլում են գտնում ազգային առանձնահատկությունները:

Ատենախոսության **հավելվածում («Սոմատիկ դարձվածքների բառարանային նկարագրման փորձից»)** ներկայացված է կատարված ուսումնասիրության արդյունքների օգտակար գործնական կիրառումը բառարանագիտության ոլորտում: Մենք առաջարկում ենք հանգամանորեն մշակված և արդեն իսկ մեր կողմից հեղինակած ռուս-հայերեն սոմատիկ դարձվածքների բառարան կազմելու ընդհանուր սկզբունքները: Հարկ է նշել, որ մինչ այժմ առանձին թեմատիկ խմբերի դարձվածքների (այդ թվում նաև սոմատիկ խմբի) ռուս-հայերեն բառարաններ առհասարակ գոյություն չունեն, մինչդեռ դրանց կարիքը խիստ զգալի է. դրանք կխթանեն գիտական և գործնական աշխատանքները դարձվածաբանության այս կամ այն ուղղությամբ: Գիտակցելով նման կարգի բառարանի կարևորությունն ու անհրաժեշտությունը՝ մշակել և հրատարակել ենք ռուս-հայերեն սոմատիկ դարձվածքների բառարան, որը փաստորեն առաջինն է նշված ոլորտում: Ատենախոսության հավելվածում ներկայացրել ենք հենց այդ բառարանի կազմության սկզբունքները և, որպես օրինակ, կցել որոշ դարձվածքներ: Մեր կողմից առաջարկվող բառարանում դարձվածքները դասավորված են այբբենական կարգով՝ ըստ սոմատիկ բաղադրիչի, կիրառվում է դարձվածքների փոկային մեկնաբանման մեթոդը, որը կազմված է հետևյալ կետերից՝

- դարձվածքի իմաստի մեկնաբանում ռուսերենով.
- առկա տարբերակային ձևեր, հոմանիշներ, հականիշներ.
- դարձվածքի հայերեն համարժեքը.
- հայերեն հոմանիշը.
- օրինակներ գեղարվեստական գրականությունից՝ երկու լեզուներով:

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են
հետևյալ հրատարակումներում.

1. Фразеологизация композитов. Вестник Ереванского государственного университета. Ереван, 1994, №2, 8 с.
2. Вариантность и синонимия соматических фразеологизмов. Русский язык в Армении. Ереван, 2005, №3, 10 с.
3. Роль соматического компонента в составе фразеологизмов (на материале русского и армянского языков). Русский язык в Армении. Ереван, 2005, №4, 10 с.
4. Трансформация соматических фразеологизмов и ее влияние на позицию соматического компонента. Русский язык в Армении. Ереван, 2006, №3-4, с. 86-92.
5. Изучение соматических фразеологизмов на неязыковых факультетах. Материалы международной научно-практической конференции. Ереван, Изд. ЕГЛУ и РАУ, 2006, с. 3.
6. Русско-армянский словарь соматических фразеологизмов. Ереван, Изд. ЕГУ. 2007, 180 с.
7. Логико-семантическая классификация соматических фразеологизмов. Ереван, Изд. Кантех, 2007, №4, с. 94-100.
8. К вопросу о национальных особенностях соматических фразеологизмов. Ереван, Вестник ЕГУ. 2007, №3(123), с.118-122.
9. Связь вариантности фразеологизма с его «внутренней формой» (на примере соматических фразеологизмов). Материалы международной научной конференции. Ереван, Изд. ЕГУ, 2007. с. 3.
10. О соматизмах во фразеологии. Материалы международной научной конференции. Ереван, Изд. ЕГУ. 2007, с. 3.
11. О некоторых принципах работы с фразеологизмами в национальной аудитории (на примере соматических фразеологизмов). Русский язык в Армении. Ереван, 2008, №6, 6 с.
12. О некоторых особенностях синонимии соматических фразеологизмов. Русский язык в Армении. Ереван, 2008, №2, с. 38-43.
13. Исторические этапы развития соматических фразеологизмов (сопоставительное исследование). Ереван, Изд. Кантех, 2008, с. 122-129.
14. Национальная основа соматических фразеологизмов (сопоставительный анализ эквивалентных русских и армянских СФ). Ереван, Изд. Кантех, 2008, №3, с. 73-78.
15. О некоторых стилистических особенностях соматических фразеологизмов (сопоставительный анализ). Ереван, Изд. Кантех, 2009, №3, с. 135-141.
16. Об основных критериях синонимичности соматических фразеологизмов. Москва, Вестник МГУ, 2009, №1, с. 30-35.
17. Влияние этнолингвистического фактора на употребление соматических фразеологизмов в языке и речи. Москва, Вестник МГУ, №1, с. 76-81.

18. Некоторые особенности фразеологического состава языка и критерии фразеологичности. Москва, Изд. МАКС ПРЕСС, сборник трудов (сост. Богомолов А., Дунаева Л.), 2010, с. 780-787.

19. Фразеологическая и лексическая синонимия в соотношении с армянскими эквивалентами. Русский язык в Армении. Ереван, 2010, №2, Ч.1, с. 26-35.

20. О взаимосвязи стержневого компонента и лексического окружения соматических фразеологизмов (сопоставительный анализ). Материалы международной научно-практической конференции. Ереван, 2010, Изд. Российского учебно-методического центра русского языка, с. 215-222.

21. Об основных критериях фразеологичности (на примере соматических фразеологизмов). Материалы международной научной интернет-конференции. Москва, Изд. МГУ, 2011, 6 с.

22. Язык жестов и фразеология. Материалы международной научной интернет-конференции. Москва, Изд. МГУ, 2011, 5с.

23. Вопросы синонимии фразеологизмов. Материалы международной научно-практической конференции. Ереван, Изд. Российского учебно-методического центра русского языка, с. 270-279.

24. Отражение этнолингвистических традиций во фразеологии (сопоставительный анализ). Материалы международной научной конференции. Ереван, Изд. ЕГУ. 2011, с. 132-137.

25. Фразеологическая и лексическая синонимия. Русский язык в Армении. Ереван, 2011, №5, Ч. 2, с. 29-37.

26. К проблеме фразеологизации невербального языка. Москва, Изд. МАКС ПРЕСС, 2011, сборник трудов (сост. Богомолов А., Дунаева Л.), 8с.

27. Отражение этнолингвистических традиций во фразеологии (сопоставительный анализ). Материалы международной научной конференции Ереван, Изд. ЕГУ. 2011, с. 132-137.

28. О компонентном составе фразеологизмов, включающих соматический компонент. Материалы международной научно-практической конференции. Ереван, Изд. Российского учебно-методического центра русского языка, 2012, 8 с.

29. К вопросу о стилистической принадлежности соматических фразеологизмов (на примере сопоставления русских и армянских СФ). Материалы международной научно-практической конференции. Ереван, Изд. Российского учебно-методического центра русского языка, 2013, с. 271-279.

30. Роль соматических фразеологизмов в межкультурной коммуникации (на примере сопоставления русского и армянского языков). Греция, Салоники, 2013, Изд. Высшей школы перевода МГУ

31. К проблеме классификации соматических фразеологизмов. Ереван, Русский язык в Армении, 2016, №7, с. 19-25.

32. К проблеме структурно-семантической целостности фразеологизмов, включающих соматический компонент (на материале русского и армянского языков). Москва, Вестник ЦМО МГУ, 2013, №4, с. 29-34.

33. К проблеме изучения фразеологии на неспециальных факультетах ЕГУ (в соавторстве). Ереван, «Մանկավարժական միտք», 2015, №4, с. 128-133.

34. Языковая картина мира сквозь призму невербальной символики. Греция, Афины, Изд. Высшей школы перевода МГУ, 2016, с. 588-596.

35. О языковых универсалиях и уникалиях (на материале фразеологизмов русского и армянского языков). Ереван, Հայագիտական հանդես, 2016, №2(32), с. 25-29.

36. Лингвокультурологическая ценность соматических фразеологизмов (на материале русского и армянского языков). Греция, Афины, Изд. Высшей школы перевода МГУ, 2017, с. 580-587.

37. Выражение негативных эмоций соматическими фразеологизмами. Ереван, «Հայագիտական հանդես», 2017, №3, с. 11-15.

38. К проблеме синонимической соотнесенности соматических фразеологизмов (сопоставительный анализ). Ереван, Հայագիտական հանդես, 2017, с. 11-17.

Ходжумян Белла Суреновна

**Лингвокультурологический и структурно - семантический аспекты
исследования соматических фразеологизмов русского языка
в сопоставлении с армянским**

Диссертация на соискание ученой степени доктора филологических наук по специальности 10. 02. 02. – Общее и сравнительное языкознание.

Защита состоится 16.04.2018 года в 15.00 по адресу 0015, г. Ереван, ул. Григора Лусаворича 15, на заседании Специализированного совета 019 ВАК по Лингвистике действующего в Институте языка им. Гр. Ачаряна Национальной академии наук РА.

РЕЗЮМЕ

Исследование фразеологизмов как культурно-языковых знаков позволяет расшифровать закодированные в них культурные смыслы, выявить их связь с культурно-национальными традициями и стереотипами. С позиций антропоцентрического подхода, предполагающего обращение к изучению особенностей языкового кодирования, хранения и передачи информации, особенно богатным материалом для исследования представляет группа соматических фразеологизмов (СФ).

Рост же интереса к сопоставительным и контрастивным исследованиям в настоящее время объясняется заметным расширением международных контактов в самых разных сферах деятельности и необходимостью эффективного решения проблем, возникающих в процессе коммуникативного взаимодействия людей, принадлежащих к разным лингвокультурным общностям.

Работа состоит из введения, четырех глав с соответствующими подглавами, заключения, приложения и библиографического списка.

Во Введении («Теоретические основы фразеологии») проводится обзор теоретической литературы по теме исследования, представлены основные направления и точки зрения по данному вопросу.

В главе I («Историко - временное описание соматических фразеологизмов») проводится классификация соматических фразеологизмов с точки зрения их исторического происхождения. В обоих языках наиболее обширную группу составляют исконные фразеологизмы.

В результате исторического развития соматические фразеологизмы претерпевают различные изменения, отражающиеся на их структурно-семантической целостности. Среди подобных изменений особой распространенностью отличаются инверсия, эллипсис, лексические вкрапления, расширение/сжатие значения, абстрагирование,

семантический сдвиг и обособление значения, замена лексических составляющих и т.д.

Глава II («Культурно-национальные особенности соматических фразеологизмов») состоит из четырех подглав, в каждой из которых соматические фразеологизмы подвергаются соответствующему сопоставительному анализу. Здесь делается попытка выявления связи национального мировосприятия и мировоззрения с соматическими фразеологизмами. В данной главе освещается также вопрос взаимосвязи и взаимодействия вербального и невербального языков, выявляется связь соматических фразеологизмов с невербальной символикой, анализируется проявление знаковой маркированности соматических фразеологизмов. На основе сопоставительного анализа нам удалось выявить среди исследуемого типа фразеологизмов языковые универсалии и уникалии, а также подробно раскрыть основные причины их возникновения. Универсальность соматической фразеологии, ее сходство в русском и армянском языках прежде всего обусловлены традиционностью символического переосмысления названий частей тела, совпадением символического культурного кода, отражаемого соматическими лексемами, причина же уникальности СФ в каждом из рассматриваемых языков кроется в индивидуальности исторического опыта языковых коллективов, в самобытности культуры, особенностях мировосприятия и психического склада народов-носителей языков.

В главе III («Структурно-семантические особенности соматических фразеологизмов»), состоящей из 8 подглав, проводится подробный сопоставительный структурно-семантический анализ соматических фразеологизмов. В данной главе проводятся две классификации соматических фразеологизмов: по частеречной принадлежности и логико-семантическая классификация, а также рассматривается связь фразеологизмов с другими единицами языка и вариантные преобразования внутри фразеологизмов.

В главе IV («Стилистическая характеристика и речевое употребление СФ») проводится стилистический анализ соматических фразеологизмов и последующее их распределение по соответствующим трем стилистическим пластам. Зачастую в рамках соматических фразеологизмов происходит взаимопроникновение стилей, что в основном наблюдается в художественной литературе и преследует определенные цели. В данной главе рассматривается также речевой аспект функционирования соматических фразеологизмов, анализируется связь между языковыми и речевыми процессами в области их употребления.

В заключении представлены основные выводы, обобщающие результаты всего исследования.

В Приложении («Из опыта сопоставительного лексикографического описания соматических фразеологизмов») изложены основные лексикографические принципы составления двуязычного русско-армянского словаря соматических фразеологизмов и представлен краткий образец разработанного и уже изданного нами словаря.

В конце работы представлен библиографический список.

Bella S. Khojumyan

Linguocultural and Structural-Semantic Aspects of the Study of Russian somatic phraseological units in comparison with the Armenian language

A thesis claiming a scientific degree of a doctor of philological sciences on the specialty 10. 02. 02 - General and Comparative Linguistics .

The defense will be held on 16.04.2018 at 15.00 at the session of the HAC Specialized Council on Linguistics 019 in the Institute of Language after H. Acharyan of the National Academy of Sciences RA at the address 0015, Yerevan, Grigor Lusavorich st., 15

SUMMARY

The study of phraseological units as cultural and linguistic signs allows us to decipher the cultural meanings coded in them, to reveal their connection with cultural and national traditions and stereotypes. From the perspective of the anthropocentric approach, which assumes an appeal to the study of the features of linguistic coding, storage and transmission of information, a group of somatic phraseological units (SF) is especially a fertile material for research.

The growth of interest in comparative and contrasting studies is currently explained by the significant expansion of international contacts in various fields of activity and the need to effectively solve problems arising in the process of communicative interaction of people belonging to different linguistic cultural communities.

The work consists of an introduction, four chapters with the corresponding subchapters, conclusions, appendixes and a bibliography.

In the Introduction ("Theoretical Foundations of Phraseology") a review of theoretical literature on the topic of the study is conducted and the main directions and points of view on this issue are presented.

In Chapter I ("Historical and Temporal Description of Somatic Phraseological Units") a classification of somatic phraseological units is carried out from the point of view of their historical origin. In both languages, the most extensive group consists of native phraseological units.

As a result of historical development somatic phraseological units undergo various changes that affect their structural and semantic integrity. Among such changes inversion, ellipsis, lexical inclusions, expansion / contraction of values, abstraction, semantic shift and isolation of meaning, replacement of lexical components, etc., are especially widespread.

Chapter II ("Cultural-National Features of Somatic Phraseologisms") consists of four subchapters in each of which somatic phraseological units are subjected to appropriate comparative analysis. Here an attempt is made to reveal the connection between the national worldview and the world outlook with somatic phraseological units. This chapter also elucidates the relationship and interaction of verbal and non-verbal languages, reveals

the relationship of somatic phraseology with non-verbal symbols, analyzes the manifestation of the sign-marking of somatic phraseological units. On the basis of comparative analysis we managed to identify linguistic universals and unique identities among the type of phraseology under study and also thoroughly disclose the main causes of their occurrence. The universality of somatic phraseology, its similarity in Russian and Armenian languages are primarily due to the traditional symbolic rethinking of the names of parts of body, the coincidence of the symbolic cultural code reflected by somatic lexemes, the reason for the uniqueness of SF in each of the languages under consideration is hidden in the individuality of the historical experience of language collectives, in features of the worldview and the mental structure of the nations speaking these languages.

In Chapter III ("Structural and Semantic Features of Somatic Phraseology") consisting of 8 subchapters a detailed comparative structural and semantic analysis of somatic phraseological units is carried out. In this chapter two classifications of somatic phraseology are carried out, that is, on part of speech affiliation and logical-semantic classification. The relationship of phraseological units with other units of the language and variant transformations within phraseological units is also studied.

In Chapter IV ("Stylistic Characteristics and Speech Usage of SPU") a stylistic analysis of somatic phraseological units and their subsequent distribution in the corresponding three stylistic strata is carried out. Often within the framework of somatic phraseology there is an interpenetration of styles which is mainly observed in fiction and pursues certain goals. This chapter also discusses the speech aspect of the functioning somatic phraseological units, analyzes the relationship between linguistic and speech processes in the field of their usage.

The Conclusion presents the main conclusions summarizing the results of the entire study.

The Appendix ("From the Experience of the Comparative Lexicographic Depiction of Somatic Phraseology") outlines the basic lexicographic principles of comprising a bilingual Russian-Armenian dictionary of somatic phraseological units and presents a brief example of a designed and already published Russian-Armenian dictionary of somatic phraseological units that was carried out by us..

At the end of the work the bibliography on the research topic is presented.